ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 6, 1945 *Общественные науки*

Պրոֆ. Պ. Ռոշուկի

ՀԱՅԱՍՏԱՆԻ XIX ԴԱՐԻ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ[1]

Ա. Գյուղացիական մասսաների պայքարը գաղութային և ֆեոդալական-ճորտատիրական ճնշման դեմ XIX դարի առաջին կեսում

Ցարիզմի սոցիալ-անտեսական քաղաքականությունը առաջ էր բերում և չէր կարող առաջ չբերել բազմաթիվ դանդաղաներ, բողոքներ և ժասսայական ելույթներ Հայաստանի գյուղացիության մեջ։ Այդ բոլորի բնույթը, թափը և ծավալը հասկանալու համար՝ դարկավոր է նկատի ունենալ հետևյալ հանդամանքները։

Հայաստանի եսմ, ինչպես նա կոչվում էր ռուսական տիրապետության առաջին տարիներում, Հայկական մարզի գյուղացիության մի գլալի ժասը կազմում էին պարսկական և թյուրքական շրջաններից գաղթած դասերը, որոնց համար ռուսական իշխանության սահմաններում հաստատվելը նշանակում էր անձի և գույքի ապահովություն, ազգային-կուլտուրական կյանքով ապրելու հնարավորություն և ֆիզիկական ընաջնջման վտանգի վերացում։ Այդ պատճառով, ինչքան էլ հետագայում հայ գյուղացիական ժասսաները ցարիզմից դժգոհելու ամեն հիմք ունեին և շատ անգամ իրենց դժգոհությունը նրա գաղութային քաղաքականությունից արտահայտում էին բավական բուռն ձևերով, այնուամենայնիվ նրանց պայքարը ցարիզմի դեմ երբեք ղինված ապստամբության ձև չէր ընդունում։

Նրանց մեծագույն ժասը այսպես կոչված պետական գյուղացիությունն էր, որի վրա կալվածատիրական-ֆեոդալական ճնշումը ծանրացած չէր, այլ միայն ցարիզմի գաղութային շահագործումը։

Այդ ճնշման ենթակա էր Հայաստանի գյուղացիության համեմատաբար փոքր մասը։ Հայաստանի կալվածատիրական շերտերին, այսպես կոչված թյուլիտաներին և մյուլքադարներին, թեև հաջողվեց ցարիզմի աջակցությամբ ընդարձակել իրենց կալվածատիրական իրավունքները ճորտատիրական ուղղությամբ, բայց այնուամենայնիվ նրանց իշխանությունը գյուղացիության վրա երբեք այն աստիճանի չհասավ, ինչ որ, օրինակ, ճորտատիրական Վրաստանում։ Այս պատճառով Հայաստանի կալվածատիրական գյուղացիության պայքարն էլ ֆեոդալական-ճորտատիրական շահագործման դեմ չհասավ իր բարձրագույն ձևին՝ զինված ապստամբության և ժասսայական կռվի այլ ձևեր ընդունեց։

Այսպիսով, մեր խնդիրն է ցույց տալ, թե Հայաստանի ինչպես պետական, այնպես էլ կալվածատիրական գյուղացիության պայքարը՝ տեղական առանձնահատուկ պայմաններում՝ ինչ ձևեր է ընդունել, ինչ չափե-

---

[1] Հատվածներ հեղինակի «Գյուղացիական ռեֆորմը Հայաստանում 1870 թ.» աշխատության համար պատրաստ ընդարձակ մոնոգրաֆիայից։

րի հասել, մի կողմից ուղղվելով ցարիզմի գաղութային-ճորտատիրական քաղաքականության դեմ, իսկ մյուս կողմից՝ կալվածատերերի ֆեոդալական-ճորտատիրական աճող շահագործման դեմ։

Ռուսական տիրապետության հաստատումից գրեթե անմիջապես հետո, մի տասնամյակ անգամ չանցած, մենք տեղեկություններ ունենք գյուղացիության դժգոհության ամենատարածված ձևերից մեկի՝ անհատական և մասսայական բողոքի մասին։ Այդպիսի գանգատներ ու բողոքներ գյուղացիությունը մասնավորապես ներկայացրեց 1837 թ. Նիկոլայ I-ին, երբ նա Հայաստան էր եկել։ Գյուղացիներն արդարադատություն էին որոնում ցարական ստորին պաշտոնյաների և կալվածատերերի կամայականության ու ճնշման դեմ բարձրագույն իշխանության առաջ։

Բերենք մի քանի օրինակ Հայաստանի տարբեր շրջանների գյուղացիության նման գանգատներից ու բողոքներից։

Զանգեզուրի մահալի Պարկագյուտ գյուղի բնակիչները 1837 թ. նոյեմբերի 26-ին գրած իրենց բողոքում հետևյալ ձևով են նկարագրում ցարական պաշտոնյաների չարաշահությունները և իրենց ծանր վիճակը. «Մեր պետերը՝ ոչխարի հոտը մտած գայլի նման՝ տակնուվրա են անում մեր բարեկեցությունը զանազան ճնշումներով... Կոմենդանտը, որը շարունակ մնում է Շուշում՝ իր տանը, իր ուտեստի համար ամեն օր գանձում է մեզանից մեկ ռուբլի արծաթով։ Ամեն վեց ամիսը մեկ՝ մեր նայիբները փոխվում են։ Նայիբի (մահալի պետի.—Վ. Ռ.) ամեն մի ճաշի համար պահանջվում է մեկ ոչխար, մեկ լիտր բրինձ, կես լիտր յուղ. խոհարարին 5 ռուբլի արծաթով, ծառային 4 ռուբլի արծաթով, միրզային 12 ռ. և նայիբին իրեն 50 ռուբլի արծաթով։ Նայիբն ունի 10 նուքեր կամ ծառա, որոնք շրջում են մեր ձիերով և վերադառնալիս՝ մեզնից վերցնում են մեկական ռուբլի արծաթով»[1]։

Զանգեզուրի մահալում գյուղացիք պաշտոնյաների դեմ միայն գրավոր բողոքներ ներկայացնելով չէին բավականանում, այլև կազմակերպում էին մասսայական ելույթներ, «բազմությամբ գանգատվում էին ճնշումներից և ապօրինի տուրքերից», որ կատարում էին նայիբը և նրա շրջապատողները, թեև այդ միջոցին դիմելն ամենևին անվտանգ չէր և թանգ էր նստում գյուղացիներին, ինչպես այդ վկայում է սենատոր Դանի հանձնաժողովի անդամներից մեկը։[2]

Նույն անձնավորությունը մի այլ առիթով Երևանից էլ գրում է այն մասին, թե ցարական տեղական մեծ ու փոքր պաշտոնյաները ինչպիսի «նախագգուշական» միջոցների էին դիմել, որ ժողովուրդը փորձ անգամ չանի գանգատներ կամ բողոքներ ներկայացնելու կենտրոնական իշխանության քննիչ մարմիններին։ «...Ինակիչները,—գրում է նա,—սարսափած ամեն ինչից՝ վախենում են, թվում է, մի ավելորդ խոսք ասել։ Նրանցից շատերը խնդիրներով թագավոր կայսրին դիմելու համար արդեն տուժել են»[3]։

Ի միջի այլոց Նիկոլայ I-ին դիմել էին Ղազախի դիստանցիայի հայ-

---

[1] Колониальная политика российского царизма в Азербайджане. Изд. АН СССР, 1936, ч. 1, стр. 368.

[2] Նույն տեղում, էջ 351—352։

[3] ЛОЦИА, д. № 37, „По поручению члену комиссии со стороны Министра юстиции обозреть Армянскую область и Карабахскую провинцию", за 1837 г., л. л. 6—20.

կական 10 գյուղի բնակիչները, խնդրելով իրենց ազատագրել «թուրք ազալարներից», «որոնք պարսիկների արշավանքի ժամանակ կողոպտում էին հայերին, իսկ այժմ կառավարում են նրանց. իսկ առանձնապես գանգատվում էին փոխգնդապետ Հասան աղայի ճնշումներից, որը նրանց նեղում է զանազան ապօրինի տուրքերով և չի տալիս այն պրովիանտի փոխը, որ իրենք 1826 և 1827 թ. թ. ժամակարարել են գանձարանին»[1]

Բարալագյազի մահալի Կորագիզ և Ալմալու թյուլային գյուղերի բնակիչները 1837 թ. գանգատվում են, որ «նրանք Պարսկաստանից գաղթելու օրից աղքատության և չքավորության մեջ են ընկել միմիայն այն ճնշումների հետևանքով..., որ նրանց պատճառում է Մահմեդ Սաղըխ-բեգը (այդ հայկական գյուղերի թյուլիստի աղան։—Վ. Ռ.), որը, բացի տուրքերից, նրանցից վերցնում է նաև զանազան դրամական հարկեր, այդ պատճառով խնդրում են թույլ տալ իրենց գաղթելու որևէ այլ տեղ, որպեսզի փրկվեն անհավատի լծից»[2]

Իուսական տիրապետության հաստատման առաջին տասնամյակի վերջում գյուղացիական դժգոհությունները մեծ ծավալ ընդունեցին Գյոկչայում կամ այժմյան Նոր-Բայազետի շրջանում հաստատված հայ գաղթականների մեջ, ուղղվելով ցարական իշխանության ծանր հարկային քաղաքականության դեմ և ընդգրկելով 30 գյուղի բնակչություն։ Այդ դժգոհությունն ստացավ գյուղացիության համառ և ըմբոստ դիմադրության ձև, մեծ մասշտաբության առիթ դառնալով ոչ միայն Հայկական մարզի իշխանության, այլև Անդրկովկասի գլխավոր կառավարչի համար, որը շարունակ հաղորդում էր Պետերբուրգ Անդրկովկասյան կոմիտեի նախագահ, ռազմական գործերի մինիստր Չերնիշովին՝ կայսրին զեկուցելու համար՝ այն ամենը, ինչ որ տեղի էր ունենում Գյոկչայում, և այն միջոցները, որ ձեռք էին առնվում գյուղացիների ըմբոստությունը ճնշելու համար։

Իսկ այդ ըմբոստությունը ծայր առավ այսպիսի պայմաններում։

Գյոկչայի հայ գաղթականների վրա «նրանց շնորհած արտոնությունը վերջանալուց հետո՝ հարկ դրվեց 1837 թ. սկսած նրանց կացության համապատասխան և այն դրույքներով, որ նշանակված են բնիկների վրա»։

Նրանք 1837 թ. ապրիլին խնդիր ներկայացրին տուրքերի կրճատման մասին, բայց հենց այն ժամանակ էլ մերժում ստացան։

Մասնավորապես Փավառի կամ այժմյան Նոր-Բայազետի գաղթականները, որ «իրենց անվանում են քաղաքացիներ» (Նոր-Բայազետը պաշտոնապես քաղաք է համարվում 1850 թվականից։—Վ. Ռ.) 1837 թ. հոկտեմբերին իշխանությանը դիմեցին մի քանի նոր խնդրով, այն է՝ իրենց քաղաքի բնակիչ ճանաչել, հողի արդյունքների տուրքերից ընդմիշտ ազատել և իրենց մոտ պետության հաշվին գավառական դպրոց բաց անել։ Նրանց երկրորդ խնդիրը մերժվում է, իսկ մյուս երկուսի պատասխանը հետաձգվում՝ հարցերն ուսումնասիրելու պատրվակով։

1837 թ. վերջին, բերքը հավաքելուց հետո՝ գյուղացիք հրաժարվում են տուրքեր վճարելուց այն պատճառաբանությամբ, որ ի վիճակի չեն

[1] ЛОЦИА, Комитет об устройстве Закавказского Края, № 318, лит. 9, № 139, 1841 г., л. л. 24—25.

[2] Колониальная политика российского царизма в Азербайджане. Изд. АН СССР, 1936, ч. I, стр. 343.

այդ անելու, մինչև որ տուրքերը չկրճատվեն։ Գավառապետը դիմեց ոչ միայն անհրաժեշտ ճանաչված «ներշնչման», այլև ըմբոստներին կարգի հրավիրելու համար ուղարկեց եսաուլներ, «բայց գյուղացիք վանդեցին նրանց, հետո էլ ակներև անհնազանդություն ցույց տվին հենց նրանց»։

Գյուղացիք պատգամավորներ ուղարկեցին Թիֆլիս գլխավոր կառավարչի մոտ. այնտեղ էր նաև հայկական մարզի պետ իշխան Բեբութովը։ Գործի քննությունը Անդրկովկասի իշխանության այն եզրակացության բերեց, որ «բացի գյուղացիների սեպ քարացած տգիտությունից և որևէ պատրվակով տուրքը մուծելուց խուսափելու մտադրությունից՝ ուրիշ ոչ մի պատճառ չկա անհնազանդության համար»։

Գյուղացիների դատառությունը հասկանալու համար՝ հարկավոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ նրանցից, բացի տուրքերից, պահանջում էին վերադարձնել այն նպաստն էլ, որ նրանց տվել էին Թյուրքիայից Գյոկչա գաղթելու ժամանակ։

Նույնիսկ իշխանության ներկայացուցիչներն ստիպված էին խոստովանել, որ «այժմ այդ նշանակալի գումարի վճարումը, թեկուզ և ժամկետներով, գյուղացիների համար իսկապես որ ծանրաբեռնիչ կլինի և տուրքերը լրիվ վճարելու գլխավոր արգելքը կհանդիսանա», և գտնում էին, որ «... ավելի օգտակար է առաջ դիջել նրանց տված նպաստի մի մասը, կամ ամրողջը», բայց չկրճատել նշանակված տուրքերը, «որպեսզի ուրիշներին առիթ չտրվի նման ներողամտության ձգտելու»։

Գյուղացիների լարված տրամադրությունների մասին իշխան Բեբութովը 1838 թ. փետրվարի 19-ին Անդրկովկասի գլխավոր կառավարիչ Ռոզենին հետևյալն է հաղորդում իր զեկուցման մեջ, որ գրել էր Քավառում (Նոր-Խայազետում) անձամբ ստացած իր տպավորությունների հիման վրա։ Նա նախ նշում է, որ՝ «իմ խրատները և հորդորանքները ոչ միայն նրանց վրա որևէ ազդեցություն չունեցան, այլ, ընդհակառակը, նրանց հանդուգն արտահայտությունները ցույց էին տալիս, որ նրանք պատրաստ են վիրավորական բաներ անելու». հավաքված մասսան նրա վրա այն տպավորությունն է թողնում, որ համարյա պատրաստ է «բացահայտ խռովություն կատարելու». դեռ ավելին. դանդան գյուղերից հավաքված գյուղացիները քավաղցիների հետ միասին «կազմել էին մի կատաղի ամբոխ և թվում էր, որ առիթ էին որոնում անկարգություններ անելու»։

Բեբութովի համար պարզվում է մի ուրիշ հանգամանք էլ. նա իմանում է, որ «կատաղի ամբոխը մելիքներից և տանուտերներից ոմանց չեզոքացրել է, և նրանք ոչ մի ազդեցություն չունեն նրա վրա, որ ժողովուրդը բոլորովին չի հնազանդվում նրանց..., մի քանի ավելի անարգեմիտ տանուտերներ... ամենևին չներկայացան ինձ..., իբր թե ժողովուրդը չի թողնում և նույնիսկ ծեծում է նրանց»։

Անկարող լինելով նման պայմաններում վերջ տալ գյուղացիների հուզումներին և նրանց հարկադրել, որ հնազանդվեն կառավարական կարգադրություններին, Բեբութովը դիմում է հետևյալ միջոցին. գյուղացիներին ուղղում է մի դրավոր հայտարարություն տուրքերը մուծելու մասին և նախազգուշացնում, որ «այդ չկատարելու դեպքում նրանք կհամարվեն կառավարության հակառակորդներ և նրանց հետ կվարվեն իբրև խռովարարների և ընդհանուր հանգստությունը խանգարողների հետ»։

Հայտարարության մեկ օրինակն ուղղված էր Բավառ, Դուլալի և Մահմեդ-Աղալու գյուղերին, իսկ մյուսը «Գյոկչայում ապրող 27 գյուղի գաղթականներին»։ Բերութովը գրում էր, որ տուրքեր մուծելու «ժամկետ նշանակում եմ մինչև առաջիկա մարտի 16-ը»։

Հայկական մարզի պետի՝ իշխան Բերութովի ինչպես անձնական այցելությունը, այնպես էլ «հայտարարությունը» գործին չօգնեցին. գյուղացիների ըմբոստությունը շարունակվում էր։ Այդ մասին գրում է հենց Բերութովն իր նույն զեկուցման մեջ և ապա գալիս այն եզրակացության, որ անհրաժեշտ է «զենքի ուժով» ճնշել գյուղացիների անհնազանդությունը և խիստ պատիժներ տալ նրանց։

Բերութովը Բավառից հեռանում է այսպիսի պայմաններում. նրա շուրջը խռնված ամբոխը «ողջ լցնում էր սարսափելի աղաղակներով, այդ աղմուկի մեջ ես կարողացա հասկանալ միայն հետևյալ բառերը. «Մենք չենք ուզում մելիքներ, տանուտերներ, շրջանային պետ ու, թվում է, նույնպես և կառավարություն»։

Ուստի Բերութովը Ռոզենին ուղղած իր զեկույցումը վերջացնում է այսպիսի եզրակացությամբ. քանի որ գյուղացիները «շրջանային պետի ուղարկած հրամանները պատառոտում են և սուրհանդակներին ծեծելով դուրս են վռնդում», այդ պատճառով «արգարությունը պահանջում է նրանց ամենախիստ պատժի ենթարկել զենքի ուժով...»։

Նույն հետևության է հանգում Անդրկովկասի գլխավոր կառավարիչը՝ Ռոզենը, որը 1838 թ. մարտի 3-ին տեղեկացնում է զինվորական մինիստր Չերնիշովին՝ Նիկոլայ I-ին զեկուցելու համար, որ ինքը կարգադրել է Գյոկչայի գյուղացիների ըմբոստությունը ճնշելու համար Բերութովի «տրամադրության տակ ուղարկել երկու վաշտ», ապա, «եթե հարկավոր լինի, դրա համար հավաքել նաև մի ավելի մեծ միլիցիա. իսկ երկու վաշտի հետ գործուղվում են նաև երկու լեռնային թնդանոթ»։

Անդրկովկասի նոր գլխավոր կառավարիչ Բոլովինի ապրիլի 7-ի հաղորդագրությունից պարզվում է, որ Գյոկչայի գյուղացիների հուզումները շարունակվում են և նրանք տուրքեր չեն վճարում, որ դրանով նրանք «նման գործողության օրինակ են ծառայել ինչպես Երևան քաղաքի, այնպես էլ մյուս շրջանների որոշ բնակիչների համար» (ընդգծումը մերն է. Վ. Ռ.)։

Այդ պատճառով Հայկական մարզի պետ իշխան Բերութովը «Գյոկչա է գործուղել Դոնի 11-րդ կազակային գնդի հրամանատար փոխգնդապետ Պրոցիկովին» երկու վաշտ եգերներով և մի հարյուրյակ կազակներով։

Այնուամենայնիվ գյուղացիք շարունակում են համառել և անմիջապես չեն ենթարկվում պատժիչ զորամասի պետի հրամաններին. ընդհակառակը, նրանք «վճռականորեն հայտարարում են նրան, որ իրենք տուրքեր չեն վճարի մինչև այն ժամանակ, քանի դեռ Դյումբրիի և Ախալցխայի գաղթականները չեն վճարել»։

Պրոցիկովը դիմում է բռնության. նա մարտի 24-ին մերձակայում է «գլխավոր գրգռիչներին» և ուղարկում Երևան, ապա «... տեսնելով նրանց բացահայտ դիմադրությունը, վճռում է խստություն գործադրել և նրանցից վեց մարդու, ավելի հանդուգներին, հավաքված ժողովրդի ներկայությամբ ճիպոտներով պատժել»։

Բոլովինի՝ վերևում նշված հաղորդագրության մեջ ասված է, որ «սույն

միջոցը բնակիչների վրա ուժեղ ազդեցություն ունեցավ և նրանք... խրնդրեցին... մի քանի ժամ տարկետում անել և հետո... հայտնեցին, որ ժողովուրդը համաձայն է տուրքերը մուծել դանձարան...»։

Հաղորդագրության մեջ մատնանշվում է նաև այն իրողությունը, որ «Գյոկչայի գաղթականներից տուրքերը գանձելու վճռական միջոցները հիմք ծառայեցին մարզի մյուս բնակիչների լիակատար հնազանդության համար»։

Այսպես խեղդվեց Գյոկչայի գաղթականների մասսայական ըմբոստությունը, որ ծագել էր իբրև բողոք ցարական իշխանության ծանր հարկային բեռի դեմ։

* * *

Ինչպես հայկական մարզի, այնպես էլ Անդրկովկասի իշխանության գլուխներին լավ հայտնի էր Գյոկչայի հայ գաղթականների ծանր տնտեսական դրությունը։ Բերությունը ստիպված էր խոստովանել այդ իրողությունը, որ, նրա ասելով, հետևանք էր «ցորենի և դարու գների նշանակալի անկման, միակ հացաբույսերի, որ աճում են Գյոկչայում, և այն բանի, որ այնտեղ խիստ հաճախ կարկուտը ոչնչացնում է ցանքերը...»։ Բայց այնուամենայնիվ ինչպես Բերությունը, այնպես էլ Անդրկովկասի գլխավոր կառավարիչները, նախ Ռոգենը, ապա Գոլովինը պնդում են այն տեսակետի վրա, որ նախ՝ պետք է գյուղացիք լիովին հնազանդվեն կառավարական կարգադրությանը և սկսեն տուրքերի մուծումը, ապա դրանից հետո միայն կարելի է թույլատրելի համարել «պատշաճ չափով տուրքերը կրճատելու կըշռայատումը նրանց նկատմամբ, որոնց գրությունն այդ հարկավոր կդարձնի»։

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ զինվորական մինիստրը Չերնիշովը՝ Նիկոլայ I-ի հրամանով՝ մարտի 28-ին գրում է Կովկասյան առանձին կորպուսի հրամանատարին մի գաղտնի թուղթ և հայտնում կայսրի կամքը, որ՝ «...ձերդ գերագանցությունը մանրամասն քննության առնի այն հիմունքները, որոնցով գեներալ-ադյուտանտ բարոն Ռոգենը ղեկավարվել է Բայազետի գաղթականների տուրքը որոշելիս, որպեսզի այդ տուրքն արդարացի համաչափության բերվի այն միջոցների հետ, որ նրանք ստանում են հողագործությունից և դրան հատուկ արդյունաբերությունից»։

Նիկոլայ I-ի կասկածներն իրավացի են դուրս գալիս։

Մենատոր Գանը, գրագվելով այդ հարցի քննությամբ, հունիսի 21-ին գեկուցում է Չերնիշովին՝ կայսրին հաղորդելու համար՝ ի միջի այլոց այն, որ Գյոկչայի գաղթականների տուրքը որոշելիս՝ խախտել են Հայկական մարզում ընդունված կարգը և այդ պատճառով այդ գաղթականների տուրքը ավելի շատ է, քան, օրինակ, նրանց հարևան ադրբեջանցի գաղթականներինը։ Ապա ավելացնում է, որ կարելի է միայն մեկ կամ երկու տարի հետո վերանայել այդ տուրքերը, որպեսզի նրանք չկարծեն, թե իրենց ըմբոստության պատճառով է արվում այդ գիջումը կառավարության կողմից։

Աչքաթող անելով գյուղացիների համառ և համերաշխ ըմբոստության այդ իրական հիմքը—սրանց տնտեսական ծանր դրությունը և ուժից գեր տուրքերը,—ցարական իշխանության ներկայացուցիչները պնդում էին, որ Գյոկչայի գաղթականները «վստահացան այդքան համառ անհնազանդություն ցույց տալ, նկատի ունենալով Փամբակ-Շորագյալի դիստանցիայի անցքերը, որ տեղի ունեցան այնտեղի գաղթականների և բնիկների միջև անբարեհույս մարդկանց դրդումով...»։

Նկատենք, ի միջի այլոց, որ թեև մեզ չհաջողվեց պարզել, թե Փամբակ-Շորագյալի դիստանցիայի ինչ անցքերին է վերաբերում իշխանության ներկայացուցիչների այդ մատնանշումը և ինչ էր այդ անցքերի էությունը, բայց դա հետաքրքրական է այն իմաստով, որ ցույց է տալիս, թե գյուղացիական ըմբոստությունները ցարիզմի դեմ «անբարեհույս մարդկանց դրդումով» եակի երևույթ չէին այդ տարիներում և պայմանավորված էին նրա գաղութային շահագործման քաղաքականությամբ։

Ցարական պաշտոնյաները նշում են նաև, որ Գյոկչայի գյուղացիների ըմբոստության սկիզբը պետք է որոնել քաղաքում. «այս չարիքի սկիզբը դրվեց քաղաքի (այսինքն Քավառի, Նոր-Բայազետի։—Վ. Ռ.) գաղթականների մեջ», որոնք «ջանում են նման անհնազանդությունը տարածել նաև մյուս բնակիչների մեջ, նույնիսկ համարձակվում են Գյոկչայի մահալում տպրող մուսուլմաններին տուժտարկել, որ միանան նրանց և տուրքեր չվճարեն» (ընդգծումը մերն է։—Վ. Ռ.)։

Ուշադրության միանգամայն արժանի այդ իրողության մասին դժբախտաբար ուրիշ տեղեկություն չկա արխիվային գործում և անկարելի է պարզել, թե ցարիզմի հարկային ճնշման դեմ պայքարելու համար հայ և թուրք գյուղացիների ուժերը միացնելու այդ «համարձակ առաջարկն» ինչ հետևանք է ունեցել և ինչ արձագանք գտել։

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ Գյոկչայի մահալի կամ Նոր-Բայազետի շրջանի գյուղացիների ըմբոստությունը, նրանց կազմակերպած համառ դիմադրությունը, Հայկական մարզի իշխանությանը հարկերը վճարելուց հրաժարվելը մեկուսացած չմնաց նրանց մահալի 30 գյուղում, այլ արձագանք գտավ Հայկական մարզի մյուս շրջաններում էլ։ Բայց դժբախտաբար այս մասին ուրիշ որևէ տեղեկություն չունենք։ Չգիտենք, թե մյուս շրջաններում ինչ ծավալ ստացան դժգոհությունները և ինչ ձև ընդունեցին դրանք։

Հատուկ ուշադրության է արժանի այն հարցը, թե Նոր-Բայազետի շրջանի գյուղացիության այդ մասսայական շարժման մեջ ինչ դեր խաղաց քաղաքի և գյուղի հասարակական վերնաշերտը և ինչ չափով շարժման վրա իր կնիքը դնել կարողացավ բուն ժողովրդական մասսան։ Արխիվային գործում եղած նյութերը բավականաչափ տվյալներ չեն ընձեռում այդ հարցը լիովին պարզաբանելու համար։ Մենք արդեն վերևում բերեցինք Բեբութովի տեղեկությունները, թե ինչպես գայրացած ամբոխը նրա ետևից աղաղակում էր «չենք ուզում մելիքներ, տանուտերներ, շրջանային պետ», անգամ կառավարություն. գիտենք նաև, որ մելիքներից ոմանք լիովին չեզոքացված էին և ոչ մի ազդեցություն չունեին ժողովրդի վրա։

Բայց սրա հետ միասին մեզ հայտնի է, որ կային նաև «անբարեմիտ» տանուտերներ, ինչպես արտահայտվում է Բեբութովը, որոնք չներկայացան անգամ նրան։ Բացի դրանից՝ Գոլովինի 1838 թ. հոկտեմբերի 7-ի զեկուցումից, որ նա ուղարկել է զինվորական մինիստր Չերնիշովին, իմանում ենք, որ Գյոկչայի գյուղացիների դիմադրությունը ճնշելուց հետո՝ զինվորական դատարանին հանձնված 13 հանցավորների թվում էին խոշոր առևտրական Բաբսեղ Արծրունին և մելիք Գալուստ Շահումյանցը, որոնք մյուսների շարքում ոչ միայն կալանքի են ենթարկվել, այլև զրկվել են «մեդալներից և զինվորական օրդեններից»։ Կալանքի ենթարկված մյուս-

11 մարդու մասին ոչ մի տեղեկություն չունենք, բայց այն մատնանշումը, թե հանցավորներից «11 մարդ մարմնական պատժի ենթարկվեցին», հիմք է տալիս ենթադրելու, որ դրանք ոչ մելիքներից էին, ոչ էլ քաղաքի առևտրականներից, այլ, հավանորեն, գյուղացիներից։

Այս ամենը, իհարկե, հնարավորություն չի ընձեռում որոշակի պատասխան տալ վերևում դրած մեր հարցին, բայց մի բան կասկածից դուրս է.—գեղքերի ամբողջ ընթացքը պարզ ցույց է տալիս, որ մենք գործ ունենք գյուղացիական մասսայական ելույթի հետ ընդդեմ ցարական հարկային ճնշումի, մի ելույթ, որ իր ծավալով, արձագանքներով, բուռն արտահայտություններով և իշխանության ներկայացուցիչների վրա թողած ազդեցությամբ ամենանշանակալին է Հայաստանի XIX դարի առաջին կեսի գյուղացիական շարժումների մեջ։[1]

* *

Ինչպես հայտնի է, անցյալ դարի 40-ական թվականներին շատ ցայտուն բնույթ ստացավ ցարիզմի հորատատիրական քաղաքականությունը Անդրկովկասում, որ կապված է փոխարքա Վորոնցովի անվան հետ։ Այդ տարիներին է, որ Հայաստանի և Ադրբեջանի կալվածատիրական շերտերին Նիկոլայ I-ի կողմից շնորհվեցին ռուսական և վրացական ազնվականների հորատատիրական իրավունքներից շատերը։ Մանրացավ կալվածատիրական գյուղացիության շահագործումը, վատացավ նրանց իրավական դրությունը։ Այդ պատճառով հասկանալի է, թե ինչու մասնավորապես 40-ական թվականներից է, որ լայն ծավալ է ընդունում կալվածատիրական գյուղացիության պայքարը, ուղղվելով ոչ միայն թյուլիստների և ժուլքաղարների աճող ճնշումների, այլև նրանց հովանավորող ու արտոնյալ վիճակում գտնող ցարական իշխանության ներկայացուցիչների դեմ։

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ այդ շրջանում սկըսված գյուղացիական շարժումներն աչքի են ընկնում ոչ միայն իրենց սուր բնույթով, այլև տևականությամբ. բացի այդ՝ գյուղացիք անհաջողության հանդիպելով, չեն դադարեցնում պայքարը և նորից ու նորից հարուցում են չլուծված հարցերը, ջանում որևէ ձևով թեթևացնել կալվածատիրական լուծը, կամ անդամ բոլորովին ազատագրվել դրանից։ Մանրամասնենք այդ պայքարի մի քանի բնորոշ դեպքերին Հայաստանի դանադան շրջաններում։

40-ական թվականների կեսերին տևական ու համառ պայքար են սկըսում Երևանի գավառի Գյոկչայի գավառամասի ազալարական գյուղացիները։ Զոդ, Մեծ-Մազրա, Փոքր-Մազրա, Զախրլու և Ղոշա-Իուլախ գյուղերի բնակիչները, ինչպես գրում է գավառապետը, «հրաժարվում են այն ծառայություններից, որ առաջ իրենք պարտավոր էին կատարել իրենց ազալարների համար։ Ազալարական գյուղացիք իրենց քայլը պատճառաբանում են այն բանով, որ մինչև 1843 թ. իրենք, ազալարների համար պարհակներ

[1] Գյոկչայի կամ Նոր-Բայազետի շրջանի 1837—1838 թ. թ. գյուղացիական այս շարժման տվյալները քաղում ենք Մոսկվայի Գլխ. կենտ. Ռազմ.-Գաստ. Արխիվի հեռակայ գործից, որի լրիվ պատճենը կա ՀՍՍՌ Գլխ. կենտ. արխիվում, ՍՊՎԻԱ, փ. № 38, գ. № 98ա, „По отношению Г. А. барона Розена об оказании турецкими переселенцами, водворенными в Армянской области на Гокчае, непослушания при взносе подати, которою они обложены с 1837 года...“; на 46 листах, л. л 1—31 об.

կատարելով, «ամեն մի ընտանիքից գանձարանին տուրք էին տալիս 7-ական ռուբլի 30 կ., իսկ նոր հարկման համաձայն պարտավոր են վճարել 11-ական ռուբլի արծաթով»[1]

Իսկ մասնավորապես Զոգ և Մեծ-Մազրա գյուղերի բնակիչները դիմում են փոխարքա Վորոնցովին, գանգատվելով իրենց ազալարների վրա և մատնանշելով ոչ միայն նրանց ճնշումները, այլև այն, որ նրանց ազալարական իրավունքները հիմնված են կեղծ փաստաթղթերի վրա։

Վորոնցովը հրամայում է «հայտնել հիշյալ գյուղերի հասարակությանը, որ նրանք առանց ասարկության... կատարեն պարհակները և կատարեն նախկին՝ հիմունքներով, մինչև որ կորոշվի Երևանի գավառի կալվածատիրական հողի վրա ապրող գյուղացիների և այդ հողի տերերի փոխհարաբերությունը...»[2]

Բայց ազալարական գյուղացիք փոխարքայի հրամանից հետո էլ չեն խաղաղվում։ Այդ մասին տեղեկացնում է գարձյալ Երևանի գավառապետը։ Նա 1848 թ. հուլիսի 15-ին գրում է Թիֆլիսի գինվորական նահանգապետին, որ փոխարքայի հրամանը գյուղացիներին հայտնելուց հետո էլ, Զոգ և Մեծ-Մազրա գյուղերի բնակիչներից ոմանք «որոշ մարդկանց սադրանքով ու գրգռմամբ, վառականորեն խուսափում են ազալարական պարհակները կատարելուց, ...այս քանի օրը ուղևորվել են Թիֆլիս՝ իշխան փոխարքային գանգատ անելու»։

Իհարկե, փոխարքան նորից մերժում է գյուղացիների բողոքը, բայց վերևում նշված հինգ ազալարական գյուղերի բնակիչները անօրինակ համառությամբ շարունակեցին իրենց պայքարը XIX դարի երկրորդ կեսին, ինչպես մինչև սեֆորմը, այնպես էլ սեֆորմից հետո։ Բայց այդ մասին կխոսենք հետո։

Կալվածատիրական լծից ազատագրվելու համար՝ բուռն և համառ պայքար են սկսում 1849 թ. Զանգեզուրի գավառամասի Ցեղ գյուղի բնակիչները կալվածատեր Ասադ-բեկի դեմ, վճռականապես հրաժարվելով իրենց գյուղը կալվածատիրական ճանաչելուց այն կառավարական հանձնաժողովի առաջ, որ կազմվել էր բեգական կալվածների հարցը պարզելու համար։ Գյուղացիք պնդում են, որ իրենց գյուղը պետական է եղել և ապօրինի կերպով է Ասադ-բեկը տեր դարձել նրան, որ այլևս նրանք չեն կարող հանդուրժել այդ բեկի ճնշումները և շահագործումը և մնալ նրա իշխանության տակ։ Իհարկե, գյուղացիներին հարկադրում են հնազանդվել իրենց կալվածատիրոջը, իսկ նրանց հուզումների ղեկավար հանցավոր ճանաչված գյուղական քահանա Սահակ Բարայանին կարգի են հրավիրում հոգևոր բարձր իշխանության միջոցով։

Թե ինչքան ծանր էր նստում գյուղացիներին ամեն մի ըմբոստություն կալվածատերերի դեմ և թե ինչպես այնուամենայնիվ ոչ միայն Ցեղ գյուղի բնակիչները, այլև ուրիշ գյուղերի կալվածատիրական գյուղացիները դիմում էին այդ միջոցին և բողոքում իրենց բեգերի դեմ,— այդ մասին գրում է հենց նույն Սահակ Բարայանը. «...թէպէտ բազումք ցանկան յայտ-

---

[1] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 206, թ. 43։
[2] Նույն տեղում, թերթ 93։
[3] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 206, թ. 100։

նել գնեղութիւնս իւրեանց բարձրագոյն իշխանութեանն, բայց խստիւ արգելին ի ըէգաց իւրեանց և սաստիկ պատուհասին, որպէս և պատահեցաւ Կոռիձորցի քահանայի որդւոյն, որ վասն խնդրելոյն գայցելութիւն ի նորին պայծառափայլութենէ կնեազ Վ.օրոնցովայ ի լինելն իւր ի Շուշիյետ մեկուսանալոյ նորուն անտի կնեազ Վ.օրոնցովի, պատժեցաւ չարաչար յիւրոց բէկաց և եղև գանահար յոյժ»։

Չնայած ահաբեկման այդ մթնոլորտին, որ ստեղծված էր գյուղացիների համար, այնուամենայնիվ հեշտությամբ չի հաջողվում Տեղ գյուղի բնակիչների ըմբոստությունը կոարել։

Նրանց պայքարը շարունակվում է մինչև 1852 թ. հետգհետե սուր բնույթ ստանալով, և ինչպես գրում է 1852 թ. ապրիլի 30-ին Անդրկովկասյան երկրի քաղաքացիական վարչության պետ իշխան Բեբութովը, «...բնակիչները հասել են մոլեգնության, իսկ... Ասաղ-բեկը ծայրահեղության»։ Ստեղծված գրության միակ հանցավորը դարձյալ հռչակվում է «չափազանց գգույշ և ծածուկ կերպով» գյուղացիներին գրգռող Սանակ Բաբայանը, որը, ինչպես գրում է մի ուրիշ ցարական չինովնիկ, Շուշու գավառապետ իշխան Թարխան-Մուրավովը գեռ 1850 թ. ապրիլի 29-ին, «չհասկանալով կառավարության նպատակները և մտադրությունները, բնակիչներին սխալ հասկացողություններ էր ներշնչում և որ բնակիչների անհնազանդությունը կալվածատիրոջը ծագում է հենց այդ սխալ ներշնչումներից»։

Մի բանում կարելի է համաձայնել ցարական չինովնիկի հետ. ճիշտ որ այն ճորտատիրական քաղաքականությունը, որ ցարիզմը Վորոնցովի փոխարքայության տարիներին վարում էր Անդրկովկասում, ուժեղացնելով Հայաստանի ու Ադրբեջանի կալվածատիրությունը, իհարկե, դրա համար ունենալով իր «նպատակները և մտադրությունները» — լիովին «անհասկանալի» էր գյուղացիների համար, և գյուղացիները, այդ թվում նաև Տեղ գյուղի բնակիչները, 40-ական թվականներին հատուկորեն պայքարում էին հենց այդ քաղաքականությունից բխող «նպատակների և մտադրությունների» կոնկրետ արտահայտությունների դեմ։

1849 թ. փետրվարի 26-ին Զանգեզուրի գավառամասի Բանազուր գյուղի բնակիչները դիմում են Ներսես V-ին և խնդրում նրան միջնորդելու փոխարքա Վորոնցովի առաջ, որ նրանց ազատեն իրենց կալվածատեր գընդապետ Զաֆար Ղուլի-աղայի երկարամյա շահագործումից ու բռնություններից, ապա նաև կրոնական վիրավորանքից, որ հասցնում է նրանց այդ կալվածատերը։ Օրինակ, գրում են գյուղացիք, «... անօրէնն այն ած և արկանել ետ ընդդէմ կրօնիս մերոյ զփիլոն քահանային մերոյ տէր Մինասայ ի վերայ շանն և ստիպեաց զժողովուրդն ծնրադրութեամբ հետևիլ այնմիկ, պատուիրելով, թէ այդ իցէ ձեզ սուրբ և քահանայ...»։

Զաֆար Ղուլի-աղայի վայրագությունների մասին 1849 թ. մայիսի 29-ին իրենց տված ցուցմունքի մեջ Բանազուրի մի քանի գյուղացիներ ի միջի այլոց ասում են, թե «անտանելի տանջանք, նեղութիւնք, գանահարութիւնք, հայհոյանք, գրկանք, յափշտակութիւնք Զաֆար Ղուլի Աղի հասուցին յայն աստիճան, մինչև անգամ արարքին գմեզ կարօտ օրական հացի. այս անտանելի բռնութիւն նորա ետ մեզ տեղի բողոքել մարմնաւոր

իշխանությանն և յայտնել զցաւ մեր նմա ի 1843 ամի. իշխանությունն որպէս ե իցէ հրամայեաց մեզ ծառայել նմա...»։

Պաշտպանություն գտնելով իշխանության կողմից՝ Ջաֆար Ղուլի-աղան ծավալում է իր սխրագործությունները, 1844 թ. վերևում նշված կրոնական անարգանքն է հասցնում գյուղացիներին, ծեծում, բանտ գցել տալիս նրանց, մահվան պատճառ դառնալով իր զոհերից ոմանց համար։

1849 թ. մայիսի 31-ին Բանագուրի մի քանի այլ գյուղացիների ցուցմունքից երևում է, որ Ջաֆար Ղուլի-աղայի հալածանքներից փախածները մեծ դժանությամբ ետ են բերվել նրա ծառաների և տեղական իշխանության միջոցով, ծեծից ու. բռնություններից մեռել են երեխաներ և մի ծննդկան կին և այլն և այլն։

Չնայած այս ամենին՝ այդ ազան վիրավորված կողմ էր ձևանում և 1850 թ. հունիսին գրավոր դիմում է անում Ներսես V-ին, որ Բանագուրից փախած 12 տուն հայերին հորդորեն վերադառնալ, «որ մյուսներին էլ օրինակ լինեն. հույս ունիմ, որ իմ կյանքի վերջումն ինձ այնպես անարգանքի միջի չիք թողիլ և իմ խնդիրքս անկատար չիք անիլ»։

Իհարկէ, ինչպես տեղական իշխանության ներկայացուցիչները, այնպես էլ Անդրկովկասի բարձրագույն իշխանությունը «անարգված» կալվածատիրոջ շահերի պաշտպան են դուրս գալիս և գյուղացիների բողոքները «բոլորովին անհիմն» համարում, ինչպես արտահայտվում է Վորոնցովն այդ մասին Ներսես V-ին ուղղած իր գրության մեջ և ավելացնում, որ այդ իսկ պատճառով հարկ չկա «ձևական քննություն կատարել Բանագուրի բնակիչների գանգատի առիթով»։

Փոխարքայի այդ գրությունից, գրված 1849 թ. նոյեմբերին, պարզվում է, որ Բանագուրի գյուղացիների պայքարը Ջաֆար Ղուլի-աղայի դեմ սկսվել է դեռ 1840 թ., երբ նրանք հրաժարվել են տուրքեր տալ նրան, իսկ 1842 թ. նրա դեմ հարուցել են բազմաթիվ մեղադրանքներ ծանր տուրքերի և դժանությունների համար։ 1843 թ. հունվարի սկզբին որոշվել է «...Բանագուր գյուղում էկզեկուցիա նշանակել... բանագուրցիներին իրենց կալվածատիրոջը հնազանդեցնելու և նրանցից բոլոր պարհակները և տուրքերը գանձելու համար։ Նույն 1843 թ. գինվորական դատարանին են հանձնվել բանագուրցիներին իրենց կալվածատիրոջ դեմ դրդողներից երեքը։ Ապա 1845 թ. սեպտեմբերին դատարանը որոշել է անհիմն համարել բանագուրցիների գանգատները Ջաֆար Ղուլի-աղայի վրա՝ դժանվերաբերմունքի և ծանր տուրքերի համար։

Այսպիսով, Վորոնցովի բառերով ասած, «հեղ և ներողամիտ» կալվածատերը շարունակում էր վայելել իշխանության պաշտպանությունը, իսկ գյուղացիների հաստատ բողոքները քննության իսկ արժանի չէին համարվում, քանի որ նրանք միշտ անհիմն էին ճանաչվում ճորտատիրական դարաբերություններն Անդրկովկասում ամրապնդող իշխանության բոլոր մեծ ու փոքր ագենտների կողմից։[1]

[1] Տեղ և Բանագուր գյուղերի մասին վերևում բերված տեղեկությունները քաղել ենք Մատենադարանի հետևյալ արխիվային գործից, որ մեր տրամադրության տակ է դրել պատմական գիտությունների թեկնածու Լ. Խաչիկյանը։ «Գործ գիւանատան ծայրագոյն կաթողիկոսի ամենայն հայոց յազգս նեղսակրութեանց և տնգատութեանց հասուցելոց հայաղգի բնակչաց և հոգևորականաց Բանագուր և Տեղ գիւղից ի կալուածատեարց նոցին պօր Տեղեկագիր № 6.—4

* * *

1850 թ. մարտին սկսվեց Նոր-Բայազետի գավառի Գյոկչայի գավառամասի Թյուլային Բժնի գյուղի հայ և Թուրք բնակիչների հաժեբաշխ ու երկարատև պայքարն իրենց կալվածատեր Արսեն Սուլթան Գեղամյանի դեմ։ Թեև հաջողվեց գյուղացիների ըմբոստությունը ճնշել նույն թվականի նոյեմբերին, բայց նրանք նորից ոտքի ելան Արսեն Սուլթանի դեմ 60-ական թվականներին, ապա ռեֆորմից հետո էլ շարունակվում էին նրանց բախումները այդ գաժան կալվածատիրոջ և նրա ժառանգների հետ։

1840 թ., այդ թյուլիստի հոր մահից հետո, Երևանի դատարանը վճռեց «դադարեցնել նրա որդի Արսեն Սուլթանի թյուլային իրավունքը»։ Բայց Արսեն Սուլթանը կարողացավ օգտվել կալվածատերերի համար ստեղծված նպաստավոր կուրսից և վերականգնել իր թյուլային իրավունքները։ Անդրկովկասի գլխավոր վարչության խորհուրդը, փոխարքա Վորոնցովի հաստատմամբ, որոշում է, որ մինչև Արևելյան Անդրկովկասի, այսինքն Ադրբեջանի և Հայաստանի, կալվածատերերի իրավունքների վերջնական սահմանումը Բժնի, Գյոկ-Թիլիսա և Ելդովան «թյուլային գյուղերի եկամուտները պետք է մնան Գեղամովների ազատ օգտագործմանը»։[1]

1850 թ. մարտ և ապրիլ ամիսներին Բժնի գյուղի բնակիչները դիմումներ են ներկայացնում Երևանի նահանգապետին և գանգատվում են Արսեն Սուլթանի վրա, թե նա վերջին վեց տարում կրկնապատկել է պարհակները. նրանք ինդրում են ստուգել իրողությունը, «և ճշտության մեջ հավաստիանալուց հետո... նրանց փրկել Արսեն Սուլթանի ստրկությունից և դաժանություններից», նրանց թույլ տալով «Բժնի գյուղից տեղափոխվել պետական հողը՝ նույն գավառամասի Ղուռի-Կալավեր ավերված գյուղը»։ Գյուղացիք խնդրում են նաև, որ միջոցներ ձեռք առնվեն, «որպեսզի Արսեն Սուլթանը արդելքներ չհարուցի մեր դեմ և չխլի մեր սեփականությունը, ինչպես այդ անում է մինչև այժմ, այլ բավականանա այն բանով, որ նրան են մնալու մեր տները»։

Բժնեցիք իրենց խնդիրը վերջացնում են այն վճռական հայտարարությամբ, թե «մենք ոչ մի պայմանով այլևս չենք կարող մնալ չինովնիկ Արսեն Սուլթանի հոգի վրա, այսքան տարի ճանաչելով նրա բնավորությունը և իմանալով այն, ինչ որ նա բերել է մեր գլխին»։[2]

Արսեն Սուլթանի բացատրություններից, ապա նաև պաշտոնական քննության տվյալներից պարզվում է, որ այդ թյուլիստը գյուղացիներից ամեն տարի պահանջում է. «ա) մի պահապան իր Երևանի տան համար, բ) ձիեր իր դանդան կարիքների համար, գ) նրա հողերի հերկում և կալսում, դ) բանվորներ դանդան կարիքների համար, ե) ամռանը գյուղում եղած ժամանակ՝ հավեր, ճտեր, յուղ, ձու, դառներ, փայտ, հնձած խոտ և ծառաներ»։

Գյուղացիք այդ ցուցակի վրա ավելացնում են ոչ պակաս ծանր տուրքերի մի ամբողջ շարք ևս, բայց թյուլիստը ժխտում է գյուղացիների

կոմլիկ Ջաֆար Ղուլի աղայ՝ն և յԱստ բեգլն...». Թիֆլիսանակ 1849 թ., վավերագրեր № 220, 221, 227 և 209ա, 210ա, 217 և այլն։ Տես նաև Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրանոցի. Թիֆլիս, 1915 թ., էջ 79—84։

[1] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 338, թ. թ. 125—148։

[2] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 338, թ. թ. 8 և 42—43։

պնդումը և Երևանի նահանգապետի հատուկ գործերի չինովնիկին հետևյալ «բացատրություններն» է տալիս, լիովին ցույց տալով իր գայլի ատամները. ես, ոգրում է նա, «...ոչ միայն իմ ընակիչների նկատմամբ որևէ դաժանության չեմ գիմել, այլ նույնիսկ նրանց խիստ կերպարանք չեմ ցույց տվել, ոչ միայն նրանց աղքատության չեմ հասցրել, այլ ընդհակառակը, ...ինքս աղքատացել եմ, իսկ նրանց գիրացրել...». և հենց այդ էլ «իմ այդ կոպիտ և անշնորհակալ ռահաթներին ստիպել է ապստամբել իմ գեմ և ոչ միայն ինձ չհնազանդվել, այլ նույնիսկ ինձ վրա անիրավացի գանգատներ տալ...»։

«Իսկ եթե,—շարունակում է գաղաղած թյուլիստը,—նրանք ճնշումներ են համարում վերևում շարադրված աշխատանքները, ապա նրանք պարտավոր են այդ բոլորը կատարել անվիճելի փաստաթղթերի հիման վրա...»։

Արսեն Սուլթանը մի այդպիսի «անվիճելի փաստաթուղթ» բերում է իր բացատրության մեջ։ Հարկավոր է ծանոթանալ դրան։

1825 թ. Երևանի Սարդար Հուսեին-խանը հրաման է տալիս Արսեն Սուլթանի հոր, «բարձրաստիճան, անձնվեր, մյուս տերերից գերազանց Բարսեղ յուզբաշու» անունով, որ Լիմնի և Դյոկ-Քիլիսա գյուղերը սրանից ավելի քան հարյուր տարի առաջ «տրված են ձեր նախնիներին և նրանց վարընթաց սերնդին իբրև թյուլ նրանց ադնվական ծագման և վաստակների համար»։

Ապա այդ հրամանում ասված է. «Հրամայում եմ հիշյալ գյուղերի ընակիչներին չխուսափել հիշյալ բարձրաստիճանության և նրա ժառանգների կամքը կատարելուց, որ ամփոփվում է «արա և մի անի» բառերում»։

«Իսկ եթե ձեզանից որևէ մեկը կխուսափի հիշյալ բարձրաստիճանի կամքը և հրամանը կատարելուց, նա նասագով[1] ծանր պատիժ ստանալուց հետո (քիթը, ականջը, ձեռքը կտրել, աչքը հանել և այլն), կմատնվի նույն այդ բարձրաստիճանի ձեռքը՝ նրա կամքին»։[2]

Եվ ահա Արսեն Սուլթանը, ի հաստատություն իր թյուլային իրավունքների վկայակոչելով այդ «պատմական դոկումենտը», եզրակացնում է, որ դրա համաձայն «իմ ռահաթները պետք է սրբությամբ կատարեն իրենց տիրոջ ամեն տեսակ պահանջները առանց որևէ առարկության, հակառակ դեպքում նրա հայեցողությամբ մահապատժի վտանգի տակ կընկնեն»։

Ապա Արսեն Սուլթանը հիշեցնելով այն, որ նրա թյուլային իրավունքները ճանաչված են նաև ռուսական կառավարության կողմից, իշխանության ուշադրությունը հրավիրում է այն բանի վրա, որ նրա գյուղացիները «իրենց տգիտության պատճառով ենթադրելով, որ այս երկրի կերպափոխումով, իրենց պարտականություններն էլ կերպափոխվել են դեպի իրենց թյուլիստ կալվածատերերը, նորից անհանդստացրին իշխանությանը իրենց սուտ գանգատներով, մտածելով այդպիսով իմ իշխանության տակից դուրս գալ, որի տակ դրված են նրանց նախնիները և նրանք իրենք մի քանի հարյուրամյակի ընթացքում»։

Այս ամենից հետո հասկանալի է, թե ինչու Լիմնի գյուղացիք այնքան վճռականորեն հարց էին գրել իրենց ազատագրելու Արսեն Սուլթանից, որն

[1] Այս անծանոթ, գուցե և ազավաղված բառի իմաստը պարզել չհաջողվեց։—Վ. Ռ.։
[2] ՀՍՍՀ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 338, թ. 103։
[3] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 338, թ.թ. 49—57։

իր ճորտատիրական իրավունքները գյուղացիության նկատմամբ դիմավորում էր պարսկական վայրագ ավանդություններով։ Այդ պատճառով էլ առանց հետևանքի էին մնում գավառական իշխանության «ներշնչումները», գյուղացիք հրաժարվում էին նրան որևէ տուրք տալուց, նրա համար որևէ պարհակ կատարելուց։

Երևանի նահանգապետի կրկնակի հրամանի համաձայն՝ գավառապետը «նորից ներշնչից նրանց, որ իրենց խոհեմությամբ հնազանդ մնան իրենց տիրոջը...», սպառնալով գյուղացիներին, որ «իշխանության հրամանին չհնազանդվելու համար նրանք խստիվ կպատժվեն, բայց այդ էլ նրանց վրա ամենևին չազդեց, և նրանք վճռականորեն և միաբան պատասխանեցին, որ իրենք պարտական չեն ոչ մի աշխատանք և պարհակ կատարել իրենց կալվածատիրոջ համար և չեն կատարի և որ նրանք պատրաստ են ամեն տեսակ պատիժ կրել, միայն թե ենթակա չլինեն Իեղամովին»։[1]

«Տեսնելով գանգատավորների այսքան մոլեգին բացատրությունը և տեղական իշխանության չհնազանդվելը»,—գրում է գավառապետը, ինքը վճռում է բռնության դիմել և բանտարկելով նրանց երեք գլխավորներին՝ Ագատ Երիդոբովին, Օհան Հարությունովին և Մալիլ Ահմեդ-օղլուն,—ուղարկում է Երևան, որ այնտեղ նրանց կալանքի ենթարկեն։

Գյուղացիների գլխավորներին կալանավորելու վրա պնդում էր հենց սկզբից Արսեն Սուլթանը, ժամանակ անելով երեք հայի և երկու թուրքի վրա, «որոնք մեն-միայն չարամտությունից դրդված երկու տարվա ընթացքում իմ բնակիչներին գրգռում են իմ դեմ, ինձ մխաներ են պատճառում, իսկ իշխանությանը զուր անհանգստության մեջ գցում»։

Հայ և թուրք գյուղացիների այդ համերաշխ պայքարը կալվածատիրական լուծը թոթափելու համար գավառապետին այն մտքին է բերում, որ անհրաժեշտ է «...իբրև օրինակ թյուլային և մյուլքադարական մյուս գյուղերի համար՝ կալանավորվածներին հեռացնել... նրանց բնակության տեղից Կովկաս կամ Ռուսաստանի ներքին նահանգները մի քանի տարով, որով կդադարեն այդ գյուղում տեղի ունեցող բոլոր անկարգություններրը»։[2]

Բայց շուտով պարզվեց, որ այդպես հեշտ չէր ընկճել գյուղացիներին և կարգը վերականգնել։ Բժնեցիները շարունակում էին դիմադրել ոչ միայն գավառապետի պահանջներին, այլև Երևանի զինվորական նահանգապետի հրամաններին։

Երևանի նահանգական վարչության 1850 թ. նոյեմբերի 30-ի զեկուցումից ուղղված Անդրկովկասի քաղաքացիական վարչության պետին՝ պարզվում է, որ Բժնիի գյուղացիները դիմել են մասսայական բողոքի հետևյալ ձևին.—նրանք «իրենց կանանց և երեխաների ուղեկցությամբ բանավոր բողոքով գալով պարոն զինվորական նահանգապետի մոտ, ոչ մի նոր բացատրություն չտալով, որն ըստ իր կարևորության անհետաձգելի բավարարում պահանջեր, արտահայտեցին միայն անընկճելի համառություն և ցանկություն իրենց վրդովեցուցիչ շարժումով հարկադրելու, որ իրենց ազատագրեն թյուլիստի հանդեպ ունեցած պարտականություններից, որովհետև նորին գերազանցության անձնական եռակի ներշնչումներից հետո, թե անհրաժեշտ է կատարել թյուլիստի պարհակները և չխուսափել հողերը

[1] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 338, թ.թ. 19—20.
[2] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 338, թ.թ. 19—20.

հերկելուց,... գանգատավորները, անհողդողդ մնալով, դրա հետ միասին հրաժարվեցին նորին գերազանցության հրամանը կատարելուց և իրենց տները վերադառնալուց»։

Այդ գեկուցման մեջ հաղորդվում է, որ դրությունը հարկադրեց նահանգապետին բռնության և զինվորական ուժի օգնության դիմելու գյուղացիության ըմբոստ մասսայի անօրինակ դիմադրությունը կոտրելու համար։ Նա հրամայեց «...ամբոխի ավելի ըմբոստներին հենց այդտեղ մարմնական պատիժների ենթարկել և ապա զինվորական պահակախմբերի պաշտպանության տակ անհնազանդներին գյուղից արտաքսել»...։

Զեկուցման մեջ նշվում է նաև, որ անհրաժեշտ է Անդրկովկասի սահմաններից արտաքսել վերևում հիշված երեք գյուղացուն, որովհետև նրանք գրգռեցին գյուղացիներին, որ «բացահայտ անհնազանդություն ցույց տան տեղական և նահանգի բարձրագույն իշխանություններին»։[1]

Սակայն հրապարակային մասսայական գանահարության դաժան միջոցին և զինվորական ուժի օգնությանը դիմելով անգամ նահանգապետին չհաջողվեց Բժնիում նախկին դրությունը վերականգնել, և հարկ եղավ որոշ զիջում անել գյուղացիներին ի հաշիվ Թյուլիսաի։

Գյուղացիների վճռականությունը և տոկունությունը հարկադրեցին Արսեն Սուլթան Դեղամովին մոռանալ իր «անվիճելի փաստաթղթերը», ընկերկել և Երևանի զինվորական նահանգապետին ուղղած իր նամակում «ցանկություն արտահայտել զիջելու հողի բերքերի տուրքերի 7-ը մասից մեկը, իսկ խոտ և դարման հարկավոր քանակությունից ավելի քիչ ստանալ»։

Թյուլիսա-մյուլքաղար Դեղամովի այդ «կամավոր» զիջումը հաստատվում է փոխարքայի կողմից և կիրառումն ստանում։

Այսպիսով, Բժնիի գյուղացիների պայքարը կալվածատիրական շահագործումից ու կախումից ազատագրվելու համար հանգեց մի աննշան զիջման, որովհետև թե Երևանի նահանգական և թե Անդրկովկասի երկրային իշխանությունները վճռականորեն պաշտպան կանգնեցին ցարիզմի ճորտատիրական կուրսին, որ 40-ական թվականներին կենսագործվում էր ամբողջ Անդրկովկասում։ Այդպիսի պայմաններում, իհարկե, անկարելի էր մի գյուղի թեկուզ համառ և վճռական պայքարով ճորտատիրական խտացող մթնոլորտը նոսրացնել։ Սակայն ինչպես Բժնիի, այնպես էլ վերևում քննության առած գյուղացիների ելույթներն ակներևորեն ցույց են տալիս, որ Հայաստանի գյուղացիական մասսան XIX դարի առաջին կեսին, ռուսական տիրապետության առաջին երկու տասնամյակի ընթացքում ցարիզմի ստեղծած գաղութային շահագործման ռեժիմի և ճորտատիրական ցայտուն սոցիալ-տնտեսական քաղաքականության իրագործման պայմաններում անընդհատ պայքարում էր այդ ամենի առաջ բերած անհանդուրժելի հետևանքների դեմ, որոնք, իհարկե, առաջին հերթին ծանրանում էին հենց նրա ուսերին։

Այդ պայքարի բնույթի և արդյունքների մասին նույնը կարելի է ասել, ինչ որ Լենինն ասում էր ճորտատիրության էպոխայի գյուղացիության վարած պայքարի մասին Ռուսաստանում. «Երբ ճորտատիրական իրավունքը գոյություն ուներ,—գյուղացիների ամբողջ մասսան պայքարում էր իր կեղեքողների, կալվածատերերի դասակարգի դեմ, որոնց պահ-

[1] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 338, թ. թ. 111--116, 130—143։

պանում, պաշտպանում և օժանդակում էր ցարական կառավարությունը։ Գյուղացիք չէին կարող միանալ, այն ժամանակ գյուղացիք բոլորովին ճնշված էին տգիտությամբ, գյուղացիք քաղաքային բանվորների մեջ օգնականներ և եղբայրներ չունեին, բայց այնուամենայնիվ գյուղացիք պայքարում էին ինչպես ի վիճակի էին և ինչպես կարող էին»[1]

Բ. Գյուղացիության պայքարը ցարական և կալվածատիրական ճնշման դեմ 50-ական և 60-ական թվականներին

1870 թ. գյուղացիական ռեֆորմին նախորդող երկու տասնամյակում Հայաստանի պետական և կալվածատիրական գյուղացիական մասսան չապատակրվելով ցարական գաղութային ճնշումից և ֆեոդալական-ճորտատիրական շահագործումից, սկսեց ընկնել մի նոր կեղեքման տակ, որ կապված էր փողային հարաբերությունների, փոխանակային տնտեսության զարգացման, մասամբ նաև կապիտալիստական արտադրության սաղմերի առաջանալու հետ քաղաքում և գյուղում։ Ճիշտ է, այդ բոլոր տնտեսական նոր հարաբերությունների ազդեցությունը գյուղացիության վրա ավելի շոշափելի կերպով երևան եկավ ռեֆորմից հետո, 80-ական և 90-ական թ. թ., բայց դրանց սկիզբը պետք է որոնել հենց մեր նշած շրջանում։

Այսպիսով, գյուղացիական շարժումների մեջ սկսում է երևան գալ մի նոր գիծ, ճիշտ է, դեռ թույլ ու հազիվ գծագրվող, բայց զարգացման ակներև տենդենց հանդես բերող.—գյուղացիների առաջ հետզհետե ծառացող կապիտալիստական շահագործման փաստը նրանց բախման մեջ է սկսում դնել այդ նոր շահագործման գիշատիչ ներկայացուցիչների հետ, թեև, իհարկե, գյուղացիական պայքարը հիմնականում շարունակում է ուղղված մնալ ֆեոդալական կալվածատիրոջ և ցարիզմի դեմ։

50-ական և 60-ական թվականների գյուղացիական պայքարի տարածված և գլխավոր ձևը նախորդ շրջանի նման մնում է մասսայական բողոքը մեծ մասամբ դրավոր դիմումով իշխանության բարձր օրգաններին կամ բարձրաստիճան պաշտոնյաներին՝ տեղական մարմինների և կալվածատերերի ապօրինությունների, ճնշումների և շահագործման դեմ։

Թե ինչ չափեր էր ընդունել 50-ական թ. թ. գյուղացիության դժգոհությունը և ինչ արտահայտություն ստացել, կարելի է իմանալ հենց Երևանի գինվորական նահանգապետի 1860 թ. գրությունից, որ ուղղված է Կովկասի փոխարքայի գլխավոր վարչության պետին։

«1857 թ.,—գրում է նա,—իսկական պետական խորհրդական պարոն Կոցեբուի կողմից Երևանի նահանգը վերստուգելու ժամանակ բնակիչներից շատերը խնդիրներ տվեցին հողի և ջրի պակասության, մյուլքադարների ճնշումների, տանուտերների ապօրինի տուրքերի և այլ հարցերի մասին»։

Այդ «խնդիրների» հետևանքների մասին նահանգապետը հաղորդում է, որ «այդ դանգատներից նրանք, որ... կարիքի արդյունք էին,... այլ ոչ թե բխում էին կռվաջոլության և դրպարտության հակումից,... հարկավոր վախճան ստացան սովորական քննության կարգով, իսկ մեացածները մի նշանակալի թվով... առանց հետևանքի են թողնված»։

Նահանգապետը, որ վերստուգման «խնդիրներն» ըստ երևույթին լիովին

[1] *Ленин*, Соч., т. V. 2-е изд., „К деревенской бедноте", стр. 311.

լուծված էր համարում, գլխավոր վարչության պետին հաղորդում է իր նոր ենթադրությունն այդ գործի մասին. «Ես հրանգնում եմ նոր քննություններ չկատարեն այն գանգատների վերաբերմամբ, որոնք մինչև այժմ առանց հետևանքի են թողնված», որովհետև, բացատրում է նա, այդ «միայն կարթնացներ հպիվ խաղաղված կովամոլության ոգին, որ այնքան ուժեղ կերպով ապրում է այս երկրում»։[1]

Բայց Երևանի նահանգապետի հույսերը չարդարացան. գյուղացիների «կովամոլության ոգին» ինչպես 50-ական, այնպես էլ 60-ական թվականներին շարունակ արթուն մնաց։

Մանրամասնենք դրա մի քանի արտահայտություններին։

1858 թ. Նորից բռնկվեց Բժնիի գյուղացիների պայքարը թյուլիստ Արսեն Սուլթան Թեղամովի դեմ։ Գյուղացիք դարձյալ հարուցում էին հին հարցը՝ իրենց ազատագրել կալվածատիրական կախումից և պետական հողի վրա տեղափոխել։ Ինչպես Երևանի Նահանգական իշխանությունը, այնպես էլ Անդրկովկասինն ստիպված եղան երկար զբաղվել այդ հարցով, պայքարը տևեց մինչև 1864 թ.։ Ի մեծ այլոց ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ բժնեցիների ըմբոստ կոիվը, նրա տևականությունը կապում էին Ռուսաստանի գյուղացիական ռեֆորմի էպոխայի անցքերի հետ։ Դրա վրա մատնանշում էր հենց Արսեն Սուլթանը ավելացնելով, որ իր գյուղացիք թևավորված ճորտերի ազատագրության օրինակով՝ չեն ըմբռնում, որ այդ Անդրկովկասին չի վերաբերում։

Բայց Անդրկովկասի իշխանությունն արդեն սկսել էր ռեֆորմի հարցը նախապատրաստել ցարիզմի այս գաղութի համար հս ու հենց այդ պատրվակ բռնելով, նա վճռականորեն այն գիծը վարեց, որ Բժնիի գյուղացիք պետք է շարունակեն ենթարկվել իրենց թյուլիստին այնքան ժամանակ, մինչև որ կալվածատերերի և նրանց գյուղացիների փոխհարաբերության հարցը լուծում կստանա ընդհանուր կարգով։[2]

Երկրորդ անգամ Բժնիի գյուղացիների ըմբոստությունը ճնշվեց հենց այն ժամենտում, երբ ցարական իշխանությունը ռեֆորմի կենսագործման էր անցել Վրաստանում։

Ինչպես Բժնիի գյուղացիների կրկնակի փորձը ցույց է տալիս, ցարիզմը կալվածատիրոջ կամքի հակառակ նրա գյուղացիների հեռանալը չէր թույլատրում, ասես թե գյուղացիք ամրացված լինեին հողին, ճորտացված։ Բայց միշտ այդպես չէին վարվում իշխանության ներկայացուցիչները։ Կալվածատիրոջ համաձայնության դեպքում կառավարության ներկայացուցիչները չէին առարկում գյուղացիների հեռանալու դեմ։ Եվ կալվածատերերն ըստ անհրաժեշտության օգտագործում էին մեկ և մյուս հնարավորությունը գյուղացիների դեմ։

1863 թ. Դարալագյազի Աղքենդ գյուղի բնակիչների 17 ընտանիք դիմում են Երևանի Նահանգապետին՝ խնդրելով, որ թույլ տան իրենց վերաբնակվելու Նոր-Բայազետի գավառի ռարտլուկ ավերված գյուղում։

Նահանգապետին տեղական իշխանության ներկայացրած բացատրությունից պարզվում է, որ այդ գյուղացիք ցանկանում են դադթել «իրենց վարելահողի պակասության պատճառով և ավելի շատ այն բանի համար,

[1] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 457, թ. թ. 119—120։
[2] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 459, թ. թ. 2—48։

որ սրասց գյուղը մյուլքաղարական է, իսկ մյուլքաղարին վճարել հողի բոլոր բերքերի $^{9}/_{10}$ մասը և դրա հետ միասին կատարել պետական ոլարհակները, տալ տուրքերը՝ նրանք իրենց համար ծանրաբեռնիչ են համարում»։ Ապա պարզվում է նաև, որ տեղական իշխանության և մյուլքաղարի կողմից ոչ մի առարկություն չկա նրանց գաղթելու դեմ։

Բանի որ դրանք ոչ միայն անհանդիստ, այլև անվճարունակ գյուղացիներ էին, մյուլքաղարը հանգամանքից օգտվում է և շտապում է ազատվել դրանցից, չսպասելով հարցի պաշտոնական լուծմանը։

1864 թ. մարտին այդ գյուղացիք իրենց երկրորդ դիմումի մեջ՝ ուղղված դարձյալ Երևանի Նահանգապետին՝ հետևյալ ձևով են ներկայացնում իրենց համար ստեղծված գրությունը. «...մեր գյուղի ներկա մյուլքաղարը, Ջալիլ խանը, մեր բոլոր վարելահողերը խլելով մեզանից, հարկադրում է մեզ, որ գաղթենք մեր խնդրած Խարտլուկ գյուղը, սակայն մինչև այժմ մեր ասած խնդրի մասին ոչ մի կարգադրություն տեղի չի ունեցել»։[1]

Այսպիսով, ցարական դիվանատների բյուրոկրատական քաշքշուկի պայմաններում, անդամ գյուղացիների տեղափոխման հնարավորությունը կալվածատիրոջ ձեռքում դենք էր դառնում ըմբոստ գյուղացիներին պատժելու, նրանց տնտեսական քայքայման մատնելու համար։

Գյուղացիների դժգոհությունն ու բողոքը, բացի ցարական չինովնիկության մեղումներից, ուղղվում էր ոչ միայն աշխարհիկ կալվածատերերի, այլև «հոգևոր հայրերի» ֆեոդալական շահագործման և հափշտակողական ախորժակների դեմ։

Այսպես, օրինակ, Սևանա լճի ափին գտնվող Զիրուխլու գյուղի բնակիչները 1866 թ. սկզբին Նահանգապետին ներկայացրած խնդրագրում այսպես են պատկերացնում իրենց տնտեսական դրությունը.—Նրանք ցանում են միայն ցորեն և գարի, բայց՝ սառնամանիքների պայմաններում՝ վատ բերքը չի բավարարում նրանց կենսական կարիքները, և նրանք ստիպված են անգամ ուտելու հաց գնել։ Մեծ է նաև նրանց վարելահողի և արոտատեղի կարիքը։

Այսպիսի պայմաններում, դանդատվում են նրանք, Սևանի վանքը հետամուտ է այն բանին, որ նրանցից խլի իրենց մի հողամասը, որ նրանց սրամադրության տակ է 1829 թ., այսինքն Թյուրքիայից այդտեղ գաղթելու ժամանակից ի վեր։

Այդ բավական չէ, տեղական իշխանությունը նրանց ծանրաբեռնում է մշտական պարհակներով.—ձմեռվա ամիսներին Սևանա լճի ափով անցնող ճանապարհը մաքրել է տալիս ձյունից, պարտավորեցնում է հինգ ձիավորով ուղեկցել փոստը և այլն։

Եվ ահա Զիրուխլուի՝ կարիքից ու կամայականությունից ծեծված խնդրատուները պաշտպանություն են որոնում Նահանգական իշխանության մոտ։ «Խնդրում ենք ազատել մեզ պետական ձրի պարհակներից, չխլել մեզանից մեր հողը և Սևանա վանքին հանձնել»,[2]—գրում են նրանք։

60-ական թվականների գյուղացիական բողոքների մեջ ուշադրության արժանի է հետևյալ նոր դիծը.—հայտնի է, որ մասնավորապես 40-ական թվականներից ցարիզմը ռուս գաղթականներ հաստատեց նաև

[1] ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 549, թթ. 4 և 14։
[2] ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 656, թ. 5։

Հայաստանում, նրանց արտոնյալ պայմանների մեջ դնելով հայ և թուրք գյուղացիության հանդեպ։ Ահա հայ գյուղացիր ըմբոստանում են ցարիզմի այդ ազգային թշնամությունը սերմանող քաղաքականության դեմ։

Ներքին Ախտայի հայ գյուղացիք 1866 թ. դիմում են փոխարքային և հետևյալ հանգամանքի վրա հրավիրում նրա ուշադրությունը.—1851 թվականից սկսած նրանց տնտեսական գրությունը վատացել է, որովհետև նրանց «պտղաբեր և գյուղին մոտիկ... վարելահողերը կտրել են ու տվել» մոլոկաններին, իսկ նրանց «թողել են միայն լեռնային, հեռավոր հողերը...», որ գյուղից 10 վերստի վրա են։ Նրանք զրկված են նաև վառելիքից, որովհետև ծանր տուրքեր են նշանակված դրա վրա։

Գյուղացիք Կովկասի փոխարքային խնդրում են, որ «1) հիշյալ մոլոկաններն ուրիշ տեղ գաղթեցվեն և առաջվա նման մեր հողերը մեր տրամադրության տակ դրվեն, 2) թույլ տրվի մեզ առանց տուրքի օգտվել անտառի փայտից մեր սեփական վառելիքի համար»։ Ապա նշում են, որ նույն վիճակում մնալ անկարող են, թող «հակառակ դեպքում մեզ մի ուրիշ տեղ գաղթեցնեն...»։ Իսկում են նաև այն փաստը, որ մոլոկանները 35, իսկ իրենք 95 ընտանիք են։

Նույնպիսի խնդրով Կովկասի փոխարքային դիմում են, դարձյալ նույն թվականին, Մաքրավանք գյուղի բնակիչները, որոնցից խլել էին նրանց տրամադրության տակ եղած Դարաչիչագի (Կոստանդինովկայի) հողերը և տվել մոլոկաններին։ Թեև նրանք վճարում են 37 ծխի տուրք, բայց միայն 15 ծխի հող ունեն։ Իսկ «Կոստանդինովկա գյուղի մոլոկանները այնքան հող ունեն, որ ի վիճակի չեն բոլորը ցանելու, այդ պատճառով էլ իրենց հողերը մեզ վարձակալության են տալիս չափազանց շահավետ գնով»։

Ապա գյուղացիք փոխարքայի ուշադրությունը հրավիրելով իրենց ազգային նվաստացած գրության վրա, կառավարության խտրական վերաբերմունքի վրա դեպի ռուս գյուղացիները և դեպի բնիկները, դառնությամբ բացականչում են՝ «չէ՞ որ մենք էլ մեծ թագավորի հավատարիմ հպատակներն ենք»։

Մեղմ գյուղացիք։ Նրանք, իհարկե, այն ժամանակ չէին կարող իրենց մտքով անգամ անցկացնել, որ իրենց գժբախտության գլխավոր պատճառներից մեկն էլ հենց այդ «հավատարիմ հպատակությունն» էր. թեև մի բան գիտեին և հարկ էին համարում այդ մասին գրել փոխարքային, վտանգի ենթարկելով իրենց բարեհաճությունը նրա աչքում, «գժբախտաբար,—նշում էին նրանք,—և ի ցավ մեր աղքատ մարդկանց խնդիրները մեզ մոտ շատ սակավ են հարգվում»։

Թե ինչ պատասխանի էին արժանանում գյուղացիների նման դիմումները, կարելի է եզրակացնել, օրինակ, այն մակագրությունից, որ Երևանի զինվորական նահանգապետ Աստաֆիևը 1868 թ. դրել էր Ներքին Ախտայի գյուղացիների խնդրագրի վրա. «Խնդրատուների նկրտումները, ...իբրև անհիմն, ենթադրում եմ առանց հետևանքի թողնել»։ Իսկ այդ «նկրտումները» հետևյալ ձևով է «մերկացնում» նահանգապետը, իբրև ոճիր ներկայացնելով այն, որ «նրանք ցանկանում են իրենց տրամադրության տակ ունենալ իրենց հողի նախկին քանակությունը և դրա համար գանգատվում

են, թե ճնշված դրության մեջ են, ձգտում են իրենց հարևանությունից հեռացնել ռուս գյուղացիներին»[1]

60-ական թվականների գյուղացիական շարժման մեջ անկարելի է անտեսել մի կարևոր գիծ ևս Ռուսաստանում 1861 թ., ապա Թիֆլիսի և Քութայիսի նահանգներում 1864—65 թ.թ. գյուղացիական ռեֆորմն անցկացնելուց հետո՝ ցարիզմն սկսեց Ագրբեջանի և Հայաստանի համար ռեֆորմի նախապատրաստություն տեսներ Մասնավորապես Հայաստանի նկատմամբ գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման միջոցառումներից մեկն էլ այն էր, որ կառավարությունը 1865 թ. Երևանում ստեղծեց այսպես կոչված Երևանի Բեգական Հանձնաժողովը, որի պարտականությունն էր ստուգել ու հաստատել նահանգի «բարձր դասի» կազմը։

Դժվար չէ կռահել, թե ինչ ապօրինությունների, կաշառակերության դուռ բաց արեց այդ Հանձնաժողովը, ինչքան նոր անդամներ շահեց այսպես կոչված «բարձր դասը», ինչքան մարդիկ կալվածատիրական իրավունքների տեր ճանաչվեցին։

Այդ մասին բավական տվյալներ կան հենց Երևանի Բեգական Հանձնաժողովի գործերում, որոնցից պարզ երևում է, թե ինչպես Հայաստանի գյուղացիական մասսան սուր պայքար սկսեց այդ Հանձնաժողովի մութ արարքները մերկացնելու և իր իրավունքները ցարական գյուղացիական ռեֆորմի այդ յուրօրինակ նախապատրաստման դեմ պաշտպանելու համար։

Հատկապես սուր բնույթ ստացավ Մեղրու շրջանի Արջաձոր գյուղի և հարևան մի քանի գյուղերի պայքարը Բեգական Հանձնաժողովի անդամ ոմն Անդրեաս Ստեփանյանի և նրա գործակիցների ապօրինությունների դեմ։ Բայց գյուղացիք ժամանակի հարց չէին հարուցում միայն, այլ նկատի ունեին ընդհանրապես այդ Հանձնաժողովի ամբողջ գործունեությունը։ Այդ կապակցությամբ Արջաձորի գյուղացիք փոխարքային ուղղված իրենց բողոքում գրում են, թե «...նկատեցեք գյուղական ժողովրդիս մեր համարձակության և անկեղծության համար, եթե մենք չենք կարող սառնասիրտ կերպով նայել այն պարշելի արարքներին, որ ամբողջ աշխարհի առաջ կատարում են այդ մարդիկ»։

Ապա նրանք խնդրում են վերստուգման ենթարկել Բեգական Հանձնաժողովի գործերը և նշում, որ «աղաղակող» փաստեր երևան կգան դրանց մեջ, ի միջի այլոց կպարզվի, թե ինչ մեծ դեր է խաղացել կաշառքը բեգի կոչում ստանալու և «բարձր դասի» մեջ մտնելու գործում[2]։

Մեղրու շրջանի հինգ գյուղի գրավոր վկայությամբ հենց Անդրեաս Ստեփանյանն էլ բեգական ծագում չունի, բայց կարողացել է Օրգուբատի գավառի Բեգական Հանձնաժողովի մեջ խցկվել և, ինչպես պնդում են գյուղացիք, կեղծ ճանապարհներով կալվածատիրական իրավունքներ յուրացրել Արջաձոր գյուղի վրա Հաջի Մելիք Բուդաղի հետ միասին, իսկ Մելիք Փարսադանովների հետ՝ Իրիխ գյուղի վրա[3]

Թեև գյուղացիների ինչպես վերևում նշված բողոքները, այնպես էլ ուրիշ շատերն անհետևանք թողնվեցին և ցարիզմն իր ծրագրած ձևով հա-

---

1 ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ. ֆ. № 133, գ. № 800, մաս II, թ.թ. 99, 100—101 և 103—104։

2 ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 26/89 գ. № 2, թ. թ. 44—45։

3 ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 26/89), գ. № 1, թ. թ. 277—280, տես նաև գ. № 2, թ. թ. 119—121։

յասաանում էլ անցկացրեց գյուղացիական կոչված ռեֆորմը կիսաճորտատիրական ոգով, գյուղացիք որևէ չափով չկարողացան իրենց ձայնը լսել տալ այդ տարիներում, բայց այնուամենայնիվ ուշագրավ է այն իրողությունը, որ մեր գյուղացիությունն էլ ցարիզմի այս ճնշված ու հետամնաց գաղութում պայքարի ու բողոքի փորձ արեց կալվածատիրոջ ու նրա պաշտպան ցարիզմի դեմ այն վճռական մոմենտում, երբ լուծում էր ստանում նրա կյանքի կարևորագույն հարցը, ֆեոդալական-ճորտատիրական լուծը վերացնելու խնդիրը։ Թույլ ու անկազմակերպ էր այդ պայքարը, բայց Լենինի մատնանշումը չմոռանանք, որ այդ շրջանում գյուղացիք պայքարում էին մենակ և այնպես, ինչպես որ կարողանում էին։

Ի վերջո մի քիչ մանրամասն կանգ առնենք 60-ական թվականների բազմաթիվ գյուղացիական բողոքներից ու ելույթներից մեկի վրա, Ալեքսանդրապոլի (այժմյան Լենինականի) գավառի 20 գյուղի պետական գյուղացիների բողոքի վրա, որ 1866 թ. հունիսի 14-ին նրանք ներկայացրին փոխարքա Միխայիլ Նիկոլայևիչին իրենց գավառապետի դեմ։ Այդ բողոքը հատուկ քննության արժանի է, որովհետև նրա մեջ գյուղացիք գիտակցաբար թե անգիտակցաբար հարուցել են այն ժամանակի գյուղական կյանքը հուզող շատ հարցեր՝ կապված ցարիզմի գաղութային ռեժիմի մի շարք այլանդակությունների և գյուղական ներքին կյանքում սկսված բախումների հետ։

Գյուղացիք օգտվում են այն հանգամանքից, որ Կովկասի փոխարքան այցելության է գալիս Ալեքսանդրապոլ, հավաքվում են քաղաքի գերեզմանատանը, կազմում ու ստորագրում են բողոքագիրը և հանդիսավոր դիմավորության մոմենտում ներկայացնում են նրան, իսկ նա էլ հանձնում է Երևանի գինվորական նահանգապետ Աստաֆևին ի քննություն։ Բազմաթիվ բողոքագրերի նման՝ այդ էլ առանց հետևանքի է թողնվում սովորական պատճառաբանությամբ, այսինքն «անհիմն» լինելու համար։ Նահանգապետն այդ եզրակացության է հանգում հատուկ հանձնարարությունների ավագ չինովնիկ Ռիմգայլոյի կատարած քննության արդյունքներին ծանոթանալուց հետո։

Հետևենք այդ չինովնիկի քննության ընթացքին, տեսնենք՝ ինչից են պանգատվում գյուղացիք և ինչ են պատասխանում նրանց։

Գյուղացիք դանգատվում են, որ իրենց հարկադրել են կառուցել մի կազակային պոստ, խոստանալով տարեկան վճարել դրա համար 100 ռ. և չեն վճարում։ Չինովնիկը բացատրում է, որ այդ ընդհանրապես կատարվում է առանց վարձատրության և գավառապետն այդտեղ մեղք չունի։ «Բնակիչներին բացատրվեց,—նկատում է նա,—որ այս բողոքն ուղղված է բարձր իշխանության դեմ։ Լավ է ասված։ Գյուղացիք, դուցե, անգիտակցաբար հարուցում էին պետական ծանր ու ձրի պարհակների վերացման հարցը, այսինքն բողոքում էին ոչ թե գավառապետի, այլ «բարձր իշխանության» լծի դեմ։

Իսկ որ այդ պարհակներն իրոք ծանր էին, վկայում է հենց նույն չինովնիկը. «Կասկած չկա, որ օրինակելի կազակային պոստի կառուցումը չափազանց ծանր է նստում բնակիչներին։ Նրանք պարտավոր են ամբողջ շինանյութը բերել իրենց հաշվին, ուղեղրամ չստանալով։ Նրանք ձրի ասլիս են բանվորներ և համարյա ձրի՝ վարպետներ» (ամեն մի վարպետի համար սատանում են 30 կ., իսկ իրենք վճարում են նրան մեկ ռուբլի)։

Գյուղացիք գանգատվում են, որ իրենց ամեն սի ընտանիքից 1861 թ. սկսած տարեկան հավաքում են 2 ռ. 17 կ.՝ ձիավոր պահակների ծախքը հոգալու համար, «որոնք իբր թե մեզ պետք է պաշտպանեն կողոպուտներից», բայց դրանք շատ սակավաթիվ են և «չափազանց անպետք»։ Կամ բերում են չարաշահության այսպիսի օրինակ.—ճանապարհների նորոգման համար պահանջում են 300 բանվոր, երբ նշված աշխատանքի համար 10 բանվորից ավելին պետք չէ։ Այս և նման դեպքերում գյուղացիք միշտ այն պատասխանն են ստանում, թե գավառապետն այստեղ ոչ մի հանցանք չունի, կամ այդ գավառապետին չի վերաբերում։ Իրանով էլ լուծված էր համարվում հարցը, ապացուցվում գյուղացիների բողոքի «անհիմն» լինելը։

Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները հարուցում են նաև այն հարցը, թե ինչքան դժվարացել է պետական անտառներից օգտվելը նրանց համար, գրեթե անկարելի դարձել. մասնավորապես նշում են անտառապետի դերը այդ հարցում, նրա պատճառած գրկանքները բնակչությանը։

Գյուղացիների դժգոհությունը և գանգատը հասկանալու համար հարկավոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ մինչև անցյալ դարի 40-ական թվականների սկիզբը ամբողջ Անդրկովկասում, տեղական սովորության համաձայն, անտառները համարվում էին պետական սեփականություն և բոլորը, այդ թվում նաև գյուղացիք, իրավունք ունեին ազատ կերպով օգտվել դրանցից։ 50-ական թվականներին պետական անտառներում արգելված էր միայն «վաճառքի համար փայտ կտրելը»։

Երբ պետական գույքերի էքսպեդիցիան առաջարկեց կալվածատիրական անտառներում էլ արգելել միայն «վաճառքի համար փայտ կտրելը», այդ առաջարկի դեմ վճռականորեն հանդես եկավ Կովկասի առաջին փոխարքան՝ Վորոնցովը. «Ես ոչ մի դեպքում հնարավոր չեմ համարում համաձայնել էքսպեդիցիայի առաջարկին, որ մասնավոր սեփականատերերի նկատմամբ որևէ սահմանափակում կատարվի իրենց հայեցողությամբ իրենց անտառներից օգտվելու գործում, ինչպես էլ որ լինեին ռուսական կառավարմանը նախորդող սովորությունները, որովհետև այդպիսի միջոցառումը... սեփականության իրավունքը կցնցեր...»[1] (ընդգծումը բնագրինն է։—Վ. Բ.)։

Վորոնցովի փոխարքայության շրջանում «սեփականության իրավունքը» հպթանակեց, և գյուղացիք հետզհետե գրկվեցին ինչպես կալվածատիրական, այնպես էլ պետական անտառներից ձրի օգտվելու իրավունքից։

Եթե այս կապակցությամբ դիտենք Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիների բողոքը, ապա պարզ կլինի, որ դա անտառներից վճարով օգտվելու նոր ծանր պայմանների դեմ եղած այն ընդհանուր դժգոհության արձագանքն էր, որ գոյություն ուներ Անդրկովկասի գյուղացիության մեջ։

Իսկ ինչ վերաբերում է անտառապետների ապօրինություններին և գյուղացիներին պատճառած գրկանքներին, այդ մասին գրում ու բողոքում էին ոչ միայն գյուղացիք, այլ ոչ այլ ոք, քան Երևանի ժանդարմական վարչության պետը՝ կապիտան Զոլոտովսկին և գրում էր հենց նույն Ալեքսանդրապոլի գավառի անտառապետի մասին, գուցե հենց նրա մասին, որից գանգատվում էին գյուղացիք։

Ահա այդ անտառապետի սխրագործություններից մի քանիսն ըստ

[1] Свод материалов по изучению быта гос. крестьян Закавказского края, т. III. *Я. Медведев*, Отношение гос. крестьян Закавказского края к казенным лесам, стр. 13 и 25.

կապիտան Զոլոտովսկու. «Ալեքսանդրապոլի գավառի բնակիչները գանգատվում են գավառական անտառապետ Ֆոն-դեր-Գոլենից այն ճնշումների համար, որ նա պատճառում է փայտ կտրելու տոմսեր տալիս, իսկ գլխավորապես նրա անբարոյական կյանքից։ Նա անբարոյական նպատակով իր մոտ է պահանջում կանանց, աղջիկների, և դրա համար մի սպանություն եղավ»։

«Անտառապետը,—հաղորդում է Զոլոտովսկին,—գյուղական համայնքներին զրկում է իրենց միջից անտառապահներ ընտրելու իրավունքից և ինքն է նշանակում դրանց»։

Ապա՝ «անտառապետը գյուղացիներին փայտ կտրելու համար տված տոմսերի վրա չի գրում այն գումարը (11 ռ. 60 կ.), որ գանձում է նրանցից...»։

«Ղարաքիլիսեցիք ասում են, որ անտառապետը նրանց հասարակական հողամասից 30 դես. մշակել է տալիս անտառապահներին իր համար»։

Ուրիշ նահանգից Երևանի նահանգը եկած քոչվորներից իր օգտին վերցնում է «տասը ոչխարից մեկը» և այլն։[1]

Ալեքսանդրապոլի գյուղացիք նման անտառապետի մասին է, որ գրում էին, թե «ավելի լավ է ավազակների ձեռքն ընկնել, քան թե գնալ նրա մոտ», իսկ Երևանի նահանգապետի հատուկ գործերի ավագ չինովնիկը միայն «լպիրշ խոսքեր» է տեսնում նրանց բողոքում և հարցը դրանով փակված համարում։

Գյուղացիների հարուցած մյուս խնդիրները հետաքրքրական են այն տեսակետից, որ դրանց մեջ ոչ միայն մերկացվում է գավառական իշխանության վարչական կամայականությունը գյուղի ներքին գործերի լուծման մեջ, այլև միաժամանակ հանկես է բերվում գյուղական վերնախավի տրամադրությունը գյուղի կյանքն իր ցանկացած ձևով ղեկավարելու գործում։

Այսպես, օրինակ, գյուղացիք իրենց բողոքագրում նշում են, որ իրենք առաջ «գանապան պարհակներ էին կատարում միշտ ըստ գյուղական տանուտերների բաշխման՝ մասնակցությամբ մի քանի պատվավոր անձնավորությունների, իսկ ներկայումս տնօրինություն է արվում առանց մեր գիտության՝ թղթատարների միջոցով։ Ապա նրանք ավելացնում են, որ, «այժմյան գավառապետի օրոք տանուտերները ոչ մի հարգանք չունեն, այդ պատճառով էլ մեր հասարակությունը նեղությունների մեջ է»։

Իհարկե, «հասարակության նեղությունները» չէին վերանում նաև տանուտերների և պատվավորների տեր ու տնօրեն լինելու դեպքում, ինչպես գրում է, օրինակ, ժանդարմական վարչության պետը Երևանի նահանգապետին 1872 թ. Էջմիածնի գավառի Տաշ-Բուռուն գյուղի մասին. «Պետական պարհակների բաշխումը կատարում են մենակ դատավորները և տանուտերը՝ առանց հասարակության մասնակցության, և բաշխման ցուցակը պահում են իրենց մոտ, մինչև որ գալիս է թղթատարը կապակի ուղեկցությամբ, իսկ այդ ժամանակ հնարավորություն էլ չկա բաշխման սխալ լինելու մասին խոսել, կսկսվեն տուգանքները»։[1]

[1] Центральный Архив Революции (ЦАР), III О, 4 ЭКСП., № 158, 1872 г., л. л. 137—146.

[1] ЦАР, III О, 4. ЭКСП., № 190, 1872 г., л. л. 204—212. Ինչպես վերևի, այնպես էլ այս քաղվածքը բերում ենք Նշված գործերի այն պատճեններից, որ կան ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվում։

Թեև գյուղական հասարակության կառավարման նոր օրենքի համաձայն բոլոր տուրքերի և պարհակների բաշխումը կատարելու էր գյուղական հասարակական ժողովը, բայց ինչպես երևում է վերևի շարադրանքից, դրա իրավունքը ոտնահարվում էր թե գավառական իշխանության միջամտությամբ, թե գյուղի իշխանավորների կամքով։

Ալեքսանդրապոլի բողոքատուները նշված հարցում փոխարքայի ուշադրությունը հրավիրելով գավառական իշխանությունից բխող վարչական կամայականության վրա, պաշտպան էին կանգնում ոչ թե գյուղական ժողովի իրավունքների, այլ գյուղական վերնաշերտի. դուր չէր, որ այդ բողոքն ստորագրող 47 հոգուց 17-ը գյուղական տանուտերներ էին։

Գյուղական վերնաշերտի տրամադրություններն են երևան գալիս նաև մի ուրիշ հարցում։ Գյուղացիք գավառապետին մեղադրում են այն բանում, որ նա հրաման է տվել գյուղերում հողի վերաբաժանումը կատարել ոչ թե հին համփա-չարեքի սկզբունքով,[1] այլ ըստ շնչերի և «այդ պատճառով էլ մեր միջև շարունակ անբավականություններ են տեղի ունենում»։

Համայնական հողը ըստ շնչերի վերաբաժանելու սկզբունքը պաշտպանում էր գյուղական չքավորությունը, իսկ վերնաշերտը կողմնակից էր մյուս սիստեմին՝ այսպես կոչված համփա-չարեքին, որի շնորհիվ կարելի էր հաժապատասխան տուրքեր տալով՝ անկախ շնչերի թվից անգամ՝ հողի մեծ քանակություն ստանալ, իսկ այդ, իհարկե, հնարավոր էր գյուղական վերնաշերտի համար միայն։ Գյուղական բնակչության աճը, հողի պակասությունը փուղային տնտեսության զարգացման պայմաններում սրեց գյուղում պայքարը այդ երկու սիստեմի կողմնակիցների միջև մասնավորապես գյուղացիական ռեֆորմից հետո։[2]

Ահա այդ պայքարի առաջին արձագանքներից մեկն էլ գտնում ենք Ալեքսանդրապոլի 20 գյուղի մեր քննության ենթակա բողոքագրում։

Ալեքսանդրապոլի գավառապետը 1866 թ., իսկ ավելի ուշ, 1882 թ. Երևանի նահանգապետը պաշտոնական հրամանով պաշտպան են կանգնում ըստ շնչի հողը վերաբաժանելու սկզբունքին, իհարկե, ոչ թե գավառի կամ նահանգի չքավորության շահերը նկատի ունենալով, այլ այն զուտ պետական ոստիկանական նկատառումով ղեկավարվելով, որ անհրաժեշտ էր մեղմել գյուղում սրվող դասակարգային պայքարը, խաղաղ և հնազանդ պահել գյուղը ռեֆորմի նախապատրաստման տարիներում։

Գ. Գյուղացիության պայքարը 1870 թ. ռեֆորմի դեմ

Ցարիզմը 1870 թ. մայիսի 14-ին Հայաստանում (և Ադրբեջանում) գյուղացիական ռեֆորմն անցկացրեց, հիմք ունենալով Ռուսաստանի և Վրաստանի ռեֆորմների կիսաճորտատիրական սկզբունքները, թեև, ինչպես արդեն նշել ենք, ճորտատիրական իրավունքը, Ռուսաստանի և Վրաստանի համեմատությամբ, մեզ մոտ գրեթե սաղմային վիճակում էր, կալվածատիրական գյուղացիք պաշտոնապես համարվում էին պետական գյուղացիներ, որոնք ապրում էին մասնատիրական հողերի վրա և ազատ էին անձ-

[1] Այդ մասին տես С. А. Егиазаров, Административно-экономический строй сельской общины в Эрив. губернии, в „Своде материалов...", т. I, ч. I, стр. 26—27.

[2] Տես, օրինակ, С. Заваров, Опыт исследования хозяйства хлебного района Эрив. губ. и Карсской области, Тифлис, 1899 г., стр. 223—224.

նական կախումից։ Եվ ահա ցարիզմն այդ ազատ հավաքված գյուղացիների վրա տարածեց Ռուսասանի և Վրաստանի ճորտ գյուղացիության «ազատագրման» սկզբունքները, նրանց վրա էլ դրեց մի շարք ծանր պարհակներ իրենց կալվածատերերի հանդեպ, եթե ոչ նույն չափի, ապա գրեթե նույն բնույթի։

Գյուղացիական ռեֆորմի այսպիսի իրագործման պայմաններում, հասկանալի է, որ կալվածատիրական գյուղացիությունը չէր կարող ամենափոքր չափով անգամ բավարարվել։ Եվ իսկապես, արխիվային նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանի գյուղացիությունն իր դժգոհությունը ցարական ռեֆորմից հաճախ այնպիսի բուռն ձևով է արտահայտել, որ գյուղացիներին «խաղաղացնելու» համար ցարիզմն ստիպված էր ոստիկանության և զորքի միջոցով բռնություն գործադրելու։

Գյուղացիության պայքարը 1870 թ. կալվածատիրական ռեֆորմի դեմ զանազան ձևեր ընդունեց։ Գյուղացիք հաճախ ուղղակի հրաժարվում էին իրենց կալվածատերերին որևէ տուրք տալուց կամ որևէ պարհակ կատարելուց. երբեմն էլ դրա հետ միասին նրանց դուրս էին անում գյուղից։

Այդպիսի դեպքերում կալվածատերերը սովորաբար դիմում էին հաշտարար միջնորդների օգնությանը, իսկ վերջիններս կամ գյուղական իշխանության կամ գավառական վարչության, հաճախ նաև նահանգապետի օգնությամբ «խաղաղացնում էին» ըմբոստ գյուղացիներին, իբրև կանոն պատասխանատվության կանչելով և պատժելով մի քանի «գրգռիչների» և «խռովարարների», որոնց նշում էին կալվածատերերը, իսկ մնացածներին բռնությամբ հարկադրում էին հնազանդվել և իրենց պարտականությունները կատարել կալվածատերերի հանդեպ։ Բայց ամեն դեպքում իշխանության ներկայացուցիչներին հեշտությամբ չէր հաջողվում «կարգը վերականգնել», և գյուղացիների ըմբոստությունը տևում էր ամիսներ, նույնիսկ տարիներ։

Ծանոթանանք գյուղացիության հետռեֆորմյան շրջանի պայքարի մի քանի բնորոշ և ցայտուն նմուշներին։

1871 թ. ապրիլի 5-ին, այսինքն ռեֆորմից մեկ տարի էլ չանցած, Երևանի գավառի Բուհամլու գյուղի մյուլքադարը հաշտարար միջնորդին գրում է. «Ձեզ մոտ եղած գրագրություններից Ձեզ անհայտ չէ, որ Բուհամլուի հասարակությունը, չնայած Երևանի զինվորական նահանգապետի հաճախակի գրավոր և բանավոր կարգադրություններին, չի վճարում ինձ անցյալ 1870 թ. մյուլքը 4-1/2 ախչայից[1] և որ այս գործում գլխավոր խռովարարներն են այնտեղի բնակիչներից չորսը ... (նշվում են նրանց անունները)։

Մյուլքադարը խնդրում է, որ այդ «չորս բուհամլվեցիները, իբրև մյուլք չվճարելու գործի գլխավոր գրգռիչներ, դատի հանձնվեն», ընդգծում նա, սիրալիր կերպով հեշտացնելով հաշտարար միջնորդի գործը, մատնանշում է նաև օրենքի այն կետերը, որոնց համաձայն գյուղացիք պետք է պատժվեն, քանի որ թույլ են տվել «անհնազանդություն և խուսափում են նահանգի պետի հրամանը կատարելուց»։

Երբեմն գյուղացիք ոչ միայն տուրք տալուց են հրաժարվում, այլև, ինչպես գանգատվում են մյուլքադարները, լոնություն են դիմում նրանց

[1] Հողի որոշ չափ։ Ամեն մի գյուղի հողը կազմում էր 6 ախչա։—Վ. Ռ.։
[2] ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվ, ֆ. № 7/70, գ. № 447, թ. 10։

հարկահավաքների (սարքարների) նկատմամբ. «Նովրուզլու գյուղի բնակիչները ...բոլորովին խուսափելով մեզ բահրա վճարելուց այս տարվա բերքից, մեր սարքարին սպառնալիքներով դուրս են արել գյուղից, ծեծի ենթարկելով նրան»,—գրում են Երևանի գավառի հաշտարար միջնորդին 1877 թ. այդ գյուղի կալվածատերերը, միաժամանակ նրա ուշադրությունը հրավիրելով այն իրողության վրա, որ հինգ «գրգռիչներից» մեկն էլ տանուտերի օգնականն է, տեղական իշխանության ներկայացուցիչը։[1]

Կալվածատերերի գանգատներից իմանում ենք, որ գյուղացիք տուրքերը վճարելուց խուսափելու համար գիմում են, օրինակ, այսպիսի միջոցի. «Շիլար գյուղի բնակիչները, հավաքելով իրենց այս տարվա հողի բերքը, կամայականորեն իրենց տները տարան այն, չտալով ինձ հասանելիք մյուլքը, չնայած իմ սարքարի բոլոր պահանջներին,»—գրում է Փանախան Մակինսկին 1879 թ. օգոստոսին Երևանի բաժնի հաշտարար միջնորդին։ «Այսպիսի կամայականության», ինչպես հայտնում է Փանախանը, նրանց դրդել է հենց իրենց համագյուղացիներից մեկը։ Բայց «սադրիչի» հայտնի լինելը չի օգնում գործին, գյուղացիք մի տարուց ավելի շարունակում են գիմադրել մյուլքադարին և հաշտարար միջնորդին։ Եվ 1880 թ. հոկտեմբերին միջամտում է նահանգական իշխանությունը, կարգադրելով «դանձել պարհակները,... բավարարել կալվածատիրոջը» և զեկուցել արդյունքների մասին։[2]

Գյուղացիների նման պայքարի ձևի մասին հայտնում են հաշտարար միջնորդին Երևանի գավառի Նեջալու գյուղի հայ և թուրք մյուլքադարները 1883 թ. հուլիսին։ Նրանց ասելով՝ այդ գյուղի բնակիչները «...ուշադրություն չեն դարձնում տանուտերի պնդումների և հարկադրանքների վրա և հրաժարվում են այս տարվա բերքից իրենց կալվածատերերին սահմանված պարհակները բաժին հանելուց»։

Կալվածատերերին տուրքեր վճարելուց հրաժարվելու և երկարատև սուր բախումների պատճառ է դառնում նաև այն հանգամանքը, որ գյուղացիք այս կամ այն դեպքում վիճարկում են կալվածատիրոջ թյուլային կամ մյուլքադարական իրավունքը։

Այդպիսի կալվածատերերից մեկը, Երևանի գավառի Պտղնի գյուղի թյուլիստ-մյուլքադարը, 1881 թ. օգոստոսի 2-ին հաշտարար միջնորդին գրում է. «Իմ Պտղնի գյուղի գյուղացիները, չգիտեմ, ինքնաբերաբար, թե, ինչպես իրենք են բացատրում, տեղական իշխանության խորհրդով, համաձայնության եկան, բոլորը երդում ընդունեցին, որ ինձ հեռացնեն Պտղնի գյուղից և ոչ մի պարհակ չկատարեն ինձ համար։ Նրանք այդպես էլ արեցին. նրանց վիրավորանքների և սպառնալիքների հետևանքով՝ ես ստիպված եղա թողնել իմ կալվածը և տնտեսությունը և Երևան գալ, մտադրություն ունենալով դիմել կառավարության օրինական պաշտպանությանը։

Դավառապետը միջամտելով գործին՝ գյուղացիներին առաջարկում էր վճարել Մելիք-Կարակոզովին, այսինքն Պտղնիի կալվածատիրոջը, տուրքերի այն մասը, որ կապված է նրա մյուլքադարական իրավունքների հետ, այն է՝ բոլոր բերքերի $^{4}/_{30}$։ Բայց գյուղացիք վճռականապես հրաժարվում

[1] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 7/70, գ. № 506, թ. 1։
[2] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 7/70, գ. № 528, թ. 1 և գ. № 542, թ. 3։
[3] ՀՍՍՌ Պետ. կենտ. Արխիվ, ֆ. № 7/70, գ. № 561, թ. 39։

էին դրանից էլ, իհարկե, լսել անգամ չուզելով թյուլային պարհակի մասին, որ հավասար էր բերքերի $^{3}/_{30}$ մասին։

Մելիք-Կարակոզովը գրում էր հաշտարար միջնորդին, որ գյուղացիք ոչ միայն հրաժարվել են այդ բոլոր տուրքերից ու պարհակներից, այլև յուրացրել են իմ սեփական հողի վրա արված ցանքերը[1]։

Պտղնիի գյուղացիների պայքարն իրենց թյուլիստ-ժյուլբաղարի դեմ ժամանակավոր և մասնակի հաջողություն ունեցավ. նրանք ազատվեցին թյուլային պարհակներից, որովհետև 1881 թ. վերջին Կովկասի փոխարքան հաստատեց Երևանի գյուղացիական գործերի նահանգային ատյանի այն որոշումը, թե «1881 թվականից դադարեցնել Պտղնի գյուղում Մելիք-Կարակոզովի կողմից թյուլից օգտվելը», ի նկատի ունենալով այն, որ, ինչպես գրել էր Երևանի նահանգապետը, «Մելիք-Կարակոզովը, ըստ իր կոչման,[2] իրավունք չուներ ձեռք բերել ընդհանրապես բնակված կալված, մասնավորապես թյուլային իրավունք, և որ այդ պատճառով նա չի կարող Պտղնի գյուղի թյուլի տերը լինել»։

Բայց տարիներ հետո Մելիք-Կարակոզովին հաջողվեց վերականգնել իր թյուլային իրավունքը։ Սենատի 1891 թ. սեպտեմբերի 23-ի բացատրություններին հիման վրա՝ Երևանի գյուղացիական գործերի նահանգական ատյանը հետևյալ նոր որոշումն ընդունեց. «Պտղնի գյուղի թյուլից ցմահ օգտվելու նրա իրավունքը կասեցնել դուրս է»։[3]

Այսպիսով, գյուղացիական ռեֆորմից 24 տարի հետո՝ ցարական իշխանությունը հարկադրում էր գյուղացիներին մինչռեֆորմյան նորմաներով թյուլային պարհակներ կատարել ոչ միայն ազնվական, այլև ոչ ազնվական կալվածատերերի համար։

Բայց այսպիսի պայմաններում անգամ չէին դադարում կալվածատիրական գյուղացիություն սուր բախումները մյուլքագարների և նրանց մշտական ու անխախտ պաշտպան ցարական կառավարության հետ։

Այդ տեսակետից հետաքրքրական են Երևանի գավառի Դյոդակլու և Դալլուլար գյուղերի դեպքերը։ 1884 թ. սեպտեմբերի 21-ին այդ գյուղերի մյուլքագարները հայտնում են հաշտարար միջնորդին, որ գյուղացիք հրաժարվում են նրանց որևէ տուրք վճարելուց։ Իսկ հաշտարար միջնորդին, ինչպես գրում է հենց ինքը, «բոլոր գյուղացիք միաձայն պատասխանեցին, որ նրանց գյուղերը պետական են և ոչ մի կալվածատիրոջ չեն հանձնվում»։ Նրա բոլոր սպառնալիքները և հորդորանքները ոչ մի ազդեցություն չեն ունենում. այն փաստի մատնանշումը, որ «նրանց գյուղերը մյուլքագարական են, որոնց համար վաղուց կոնոնագրեր (уставные грамоты) են կազմված, իսկ պետությունը միայն ունի 5 ստիլ Դյոդակլուում և 4 ստիլ՝ Դալլուլարում»,—նույնպես նշանակություն չի ունենում։

Գյուղացիք, ինչպես գրում է հաշտարար միջնորդը, «կտրականապես հրաժարվում էին իմ օրինական պահանջը կատարելուց, միևնույն լանը կրկնելով, ...թե նրանք պատրաստ են լանտ նստելու, Սիբիր աքսորվելու,

[1] ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվ, ֆ. № 7/70 գ. № 546, թ. 14։
[2] Այսինքն իբրև ոչ ազնվական։—Վ. Ռ.։
[3] ՀՍՍՌ Պետ. Կենտ. Արխիվ, ֆ. № 7/70 գ. № 675, թ. թ. 2—4։
[4] Ստիլը կազմում էր ախչայի 1/20 մասը։—Վ. Ռ.։

բայց ոչինչ չեն տա կալվածատերերին, և որ իմ կողմից իզուր նեղություն է նրանցից պարհակները գանձելու գործին դիմելը»։

Գյուղացիների այդպիսի վարմունքը հաշտարար միջնորդին թվում է «ոչ թե իրենց կալվածատերերին չրավարարելու մի գաղարկ ցանկություն», այլ «այսպեղ մի ինչ-որ ուրիշ բան կա, լուրջ բան, ապստամբության նամխությունման մի բան (իբր նրանք ցանկանումեն տքսորված լինել, քան պարհակներ վճարել), որոնք պետք է հենց այժմ վերացվեն ամենախիստ հարկադրական միջոցներով... Մանավանդ որ գյուղացիների այդ բացականչությունը տարածվել է և տարածվում է մյուս գյուղերում, ինչպես. օրինակ, Նաջիլուում, Ղամարլուում, Զոհրարլուում, Դվինում և ուրիշներում»։

Հաշտարար միջնորդը ստիպված է լինում «գյուղացիների այդպիսի տրամադրության ժամանակ» մյուլքի գանձումը հետաձգել և գավառապետի օգնությանը դիմել։ Ապա նա Երևանի նահանգապետին ներկայացրած զեկուցման մեջ հետևյալ խորհրդածություններին է անձնատուր լինում. «...եթե գյուղացիների տրամադրություններիդեմ (противу настроения умов)... անմիջապես խիստ միջոցներ ձեռք չառնվեն՝ ապստամբությունը վերացնելու և նարդը վերականգնելու համար, ապա անկարելի է նրանց այսպիսի տրամադրության ժամանակ նրանցից որևէ գանձում կատարել և կալվածատերերին բավարարել, մանավանդ որ նրանց օրինակով այդ անկարգությունները համաճարակային հիվանդության նման տարածվում են մյուս գյուղերում և կարող են հետագայում ընդգրկել ամբողջ բաժինը»[1] (խոսքը վերաբերում է Երևանի հաշտարար բաժնին։—Վ. Փ.)։

Արխիվային գործից չի պարզվում, թե գավառական և նահանգական իշխանությունները ինչ միջոցների դիմեցին գյուղացիների «տրամադրությունների» դեմ, ինչպես «խաղաղացրին» գյուղացիների ըմբոստությունը և «կարգը» վերականգնեցին։ Բայց անկախ այդ ամենից՝ ինքնին կարևոր իրողություն է հենց այդ երկու գյուղի մյուլքագարական գյուղացիների վճռական ելույթը կալվածատիրական կապանքների դեմ և այդ ըմբոստության «համաճարակային» ազդեցությունը հարևան գյուղերի բնակչության վրա։

* * *

Ուշադրության արժանի է Նոր-Բայազետի գավառի՝ մեզ արդեն ծանոթ՝ չորս գյուղի (Զոդ, Մեծ Մազրա, Ղըզըլ-Իուլաղ և Սուլթան-Ալի-Ղըշլաղ) ազալարական գյուղացիների պայքարը կալվածատիրական կախումից ազատագրվելու համար։ Այդ համառ և տեսական պայքարը, որ, ինչպես տեսանք, սկսվեց 40-ական թվականներին, շարունակվեց 60-ական թ. թ. ընթացքում, հաջողությամբ պսակվեց գյուղացիական ռեֆորմից հետո՝ 1877 թ.։

Այդ թվականի ապրիլի 18-ին կենտրոնական իշխանության համապատասխան օրգանների՝ գյուղական դասի կազմակերպման Գլխավոր Կոմիտեի և Կովկասյան Կոմիտեի միացյալ ատյանը որոշեց. «Նոր-Բայազետի գավառի գյուղերում պետական հողերի վրա բնակեցված գյուղացիներին ազատել անձնական պարհակներից, որ նրանք կատարում են թնն ազալարա-

[1] ՀՍՍՌ Գեն. կենտ. Արխիվ, ֆ. № 770, գ. № 570, թ. թ. 3—3

կան ընտանիքների օգտին, որոնց՝ գյուղացիների պարհակներից ստացած եկամուտը կորցնելու համար՝ ձրի տալ իբրև սեփականություն 1350 դեսյատին հող պետական աղատ հողերից»[1]

Այդ որոշման կենսագործման համար պահանջվեց ամբողջ 12 տարի, և միայն 1889 թ. օրենք դարձավ այն։ Այդ տարիներին, սակայն, գյուղացիք վճռականապես հրաժարվեցին աղալարներին որևէ տուրք տալուց, չնայած նրանց մշտական դանգատներին և տեղական իշխանության ձեռք առած բոլոր միջոցներին։[2]

1889 թ. այդ օրենքի կենսագործման առթիվ, Երևանի նահանգի պետական գույքերի կառավարիչը գրում է նահանգապետին. «...Երևանի աղալարների բացառիկ գրությունը և տեղական պետական բնակչության առանձնահատուկ վերաբերմունքը դեպի նրանց անհրաժեշտություն առաջ բերեցին ստեղծել հատուկ սեպարատիվ օրենք, որ նկատի ուներ ոչ միայն գյուղացիներին փրկել անձնական նատուրալ պարհակներից, այլև հասատուն կերպով ապահովել հենց աղալարների կենցաղը, ընդ որում ամեն մի աղալարական ընտանիքի համար 150 դեսյատին հողաբաժինը լիովին բավական համարվեց»։

Այդ աղալարներին հողով ապահովելը թանգ նստեց աղատված գյուղացիներին, նրանց շահերն այս դեպքում էլ ոտ բերվեցին նրանց շահագործողներին։ Այդ ստիպված էր խոստովանել հենց նույն ցինոփիկը. «Հարկավոր է...նկատել,—որում է նա,— որ աղալարներին սեփականություն հատկացնելը չափազանց նեղեց բնակչությանը, իլելով նրանից ամենալավ հողերը և հասատուց հողերի չափազանց փնասակար շերտամիջություն (чересполосность), որովհետև աղալարներին բաժին հանած հողամասերը գանվում են ավելի քան 40 տեղում. այդպիսի շերտամիջությունը ցանկալի կլիներ և անհրաժեշտ է վերացնել ինչ դնով էլ որ լինի...»։[3]

*

Մենք քննության առանք հետռեֆորմյան շրջանի գյուղացիական պայքարի մի քանի բնորոշ արտահայտությունները 70-ական թվականներին և 80-ական թ. թ. սկզբին, այսինքն այն շրջանում, երբ գյուղացիական ռեֆորմի անմիջական արդյունքներն արդեն երևան էին եկել։

Իհարկե, գյուղացիության պայքարը շարունակվեց ճորտատիրական ռեացորդների և ցարիզմի գաղութային շահագործման դեմ նաև անցյալ դարի վերջին 10—15 տարում, միաժամանակ ուղղվելով կապիտալիստական շահագործման դեմ, որի ծանրությունը հետզհետե ավելի ու ավելի շոշափելիորեն էր զգացվում գյուղում։

Բայց այստեղ այդ ամենի վրա կանգ չենք առնի։[4] Բավականանանք միայն հետևյալը նշելով։

---

1 ՀՍՍՌ Գետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 1343, թ. թ. 33—35։

2 Նույն տեղում։

3 ՀՍՍՌ Գետ. կենտ. Արխիվ, ֆ. № 133, գ. № 1365, թ. թ. 114—117։

4 Հայաստանի XIX դ. գյուղացիական շարժման ավելի լրիվ պատկերը ընթերցողը կգտնի ազգագրության հանձնված մեր հետևյալ աշխատության մեջ, որ կազմել ենք Գ. Մանվելյանի աշխատակցությամբ.—Крестьянское движение в Армении в XIX веке. Сборник документов (По материалам Центр. Гос. Архива Армянской ССР).

Երևանի նահանգապետը մեզ հետաքրքրող հարցի մասին 1895 թ. հունվարին ոստիկանության դեպարտամենտին տեղեկացնում է, որ «Էջմիածնի գավառի Խախունարխ գյուղում բացահայտ դիմադրություն է ցույց տրված նույն գավառի երկրորդ զավառամասի պրիսավի կարգադրություններին», իսկ «դիմադրության առիթ եղել է այն, որ պահանջվել է պետական տուրքերի ապառիկները վճարել»։ Ապա նա շեշտում է այն հանգամանքը, որ «վերջին տարիների ընթացքում իշխանությանը ցույց տրվող բացահայտ և հանդուգն դիմադրության մի քանի դեպքեր են եղել և բոլորն էլ հայկական գյուղերում։ Իսկ հանցավորները «գատավարության ընդհանուր կարգով» թույլ պատիժներ են ստացել։

Հենց այդ էլ անհանգստացնում է նահանգապետին, և նա այդ առթիվ այսպիսի դատողություններ է անում, դրանց վրա հրավիրելով ոստիկանության դեպարտամենտի ուշադրությունը. «Հանցավորներին այդպես անպատիժ թողնելը չափազանց փասակար ազդեցություն է ունենում ժողովրդի վրա, իսկ այդ, բացի մյուս բոլոր նկատառումներից, երևում է այն հանգամանքից, որ վերջին ժամանակներս իշխանությանը դիմադրություն ցույց տալու դեպքերը հաճախացել են։ Այնինչ թույլ վերաբերմունքը դեպի այդպիսի հանցագործությունների մեջ մեղավորները վարկաբեկում է իշխանությունը և կարող է այնպիսի հետևանքների հասցնել, որոնք ամենաարտակարգ և դաժան միջոցառումների անհրաժեշտությունն առաջ կբերեն»[1]

Այսքան սպառնալի էր թվում Երևանի նահանգապետին դրությունը հայ գյուղում հեռանիզորմյան շրջանում, այսքան մտահոգում էր նրան գյուղացիների ըմբոստ տրամադրությունը։

Նախորդ բոլոր էջերում շարադրվածը բավականաչափ հիմք է տալիս պնդելու, որ ցարական նահանգապետը յուր տեսակետից արդարացի էր։ Ոչ միայն XIX դարի վերջին տարիներում, այլև այդ հարյուրամյակի ամբողջ ընթացքում, Հայաստանի գյուղացիությունը, թե պետական և թե կալվածատիրական, չնայած դաժան պայմաններին և բռնություններին, շարունակ պայքարել էր իր բոլոր տեսակի շահագործողների և դրանց գլուխ կանգնած ցարիզմի դեմ։

Բայց դա գյուղացիական պայքարի այն շրջանն էր, երբ գյուղացին կռվում էր իր գյուղի, իր գավառի, իր նահանգի շրջանակում և, իբրև կանոն, համապետական ռևոլյուցիոն նպատակներ դեռ ի վիճակի չէր առաջադրելու։ Դեռ չկար նրա պայքարը գլխավորող ու համախմբող բանվոր դասակարգի գեկավարությունը։ Այդ պատճառով էլ նրան հաջողվում էր իր շահագործողներին, նրանց պետությանը միայն մասնակի դիմումների մղել։ Լիակատար հաղթանակի համար գյուղացին պետք է պայքար սկսեր բանվորի հետ, նրա գեկավարությամբ։

«Միայն կոմբինացված ապստամբությունը բանվոր դասակարգի գլխավորությամբ կարող է հասցնել նպատակին»,—ասում է ընկեր Ստալինը։

[1] ЦАР, ДП, II, № 26. ч. 22, 1895 г. лл. 1—4։ Բաղվածները բերում ենք Ռևոլ. կենտ. Արխիվի նշված գործի այն պատճենից, որ կա ՀՍՍՌ Գեն. կենտ. Արխիվում։

В. Рштуни

Крестьянское движение в Армении в XIX в.

(Р е з ю м е)

В этой статье—О крестьянском движении в Армении в XIX веке—автор на основании, главным образом, архивных материалов изучает особенности, условия, формы и ход развития крестьянской борьбы с первых годов утверждения в Армении русской власти до конца 80-х годов.

Малочисленность помещичьих крестьян, неоформленность крепостнических отношений и, следовательно, сравнительная слабость феодально-крепостнической кабалы, с одной стороны, политические упования армянского народа, связанные с Россией, как со спасительницей армянских масс от жестокого ига турецкого и персидского деспотизма, с другой,—являются основными причинами, обусловившими особенности крестьянского движения в Армении. Они достаточны для понимания и того факта, почему крестьянское движение в Армении не дошло до высшего своего выражения, до массового вооруженного выступления против помещичьей эксплоатации и колониального гнета царизма, как это имело место, например, в Грузии.

Все же крестьянское движение в Армении в XIX веке богато и содержательно и тесно связано с социально-экономической политикой царизма и всем ходом экономического развития Армении.

В первой половине XIX века крестьянская борьба была направлена против колониального режима и податного гнета царизма и против усиливающейся феодально-крепостнической эксплоатации. Яркими моментами этой борьбы можно считать массовое выступление переселенцев-крестьян 30 деревень Ново-Баязетского магала против тяжелого податного обложения и упорное движение крестьян разных районов Армении за освобождение от помещичьей зависимости.

В 50-х, а в особенности 60-х, годах в крестьянской борьбе появляются новые черты, связанные с подготовкой царизмом крестьянской реформы в Армении и с началом развития в деревне внутреннего антагонизма, обусловленного первыми успехами товарно-денежных отношений среди крестьянства.

Под влиянием российских революционных событий помещичьи крестьяне Армении начинают борьбу против своих помещиков за освобождение, одновременно ведут упорную борьбу против царской подготовки крестьянской реформы в Армении. В массовом же выступлении государственных крестьян против власти выявляются не только общее недовольство деревни гнетом и своеволием царской администрации, но и особые претензии деревенской верхушки на укрепление своей ведущей роли в деревне.

Начиная с крестьянской реформы в Армении, борьба крестьян-

ских масс направляется против проведения в жизнь царской полукрепостнической реформы, а потом против ее результатов, принимая нередко такие острые формы, что для усмирения крестьян принуждена бывала вмешиваться в дело сама губернская власть.

В конце прошлого века в армянской деревне было создано такое напряженное положение, так строптиво было настроено крестьянство по отношению к власти, что в 1895 г. эриванский военный губернатор в своем докладе департаменту полиции предполагал, что все это могло вызывать „необходимость самых экстренных и суровых мер".

О крестьянской борьбе в Армении в XIX веке можно в основном сказать то же самое, что говорит Ленин о борьбе крестьян в России того же периода.

„Крестьяне не могли объединиться, крестьяне были тогда совсем задавлены темнотой, у крестьян не было помощников и братьев среди городских рабочих, но крестьяне все же боролись, как умели и как могли" (*Ленин,* Соч., т. V, стр. 311).